



Առեղծ Գրքոց - Խ

891-99  
U-19

Յ. ՍԱՆՍՈՒՂԱՍ - Խ

493

19  $\frac{28}{VIII}$  25

# ԳԱՐՆԱՆ

# ԳԻՇԵՐՆԵՐ

(Մի Սպայի Կորսուած Յիշատակարանից)

(1919 — 1920)



Գորիս-Երեւան-Թիֆլիս-Նիւ Եորք

Հրատարակութիւն՝  
ՅՈՎՀ. ՊԱԼԵԱՆԻ

Երբ  
Երբ

A  $\frac{I}{14411}$

1921  
Տպագրութիւն՝  
ԱՐՄԷՆԻԱ ՏՊԱՐԱՆԻ  
Նիւ Եորք



1. 10/10/10

10/10/10

10/10/10

10/10/10

10/10/10

Նուէր՝

**ԱՍՏՂԻԿԻՆ**



**ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ**



## I. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երբ ես եկայ, դու չկայիր ձեր տանը:

Բնանկարդ, որ դահլիճն էր զարդարում, ծանօթացրեց ինձ եղբայրդ:

Այն օրից հոգիս կարօտի մի թովիչ զգացում ունեցաւ քո հանդէպ: Չ'նայած չէի ճանաչում քեզ, չէի տեսել քեզ:

\* \* \*

Մի օր, երբ քո երկրիդ յատուկ զարնանամուտի երազկոտ մի գիշեր էինք լուսցնում եղբօրդ հետ, դու անծանօթ, որ մի օտարական էլ կայ այնտեղ, ճանապարհորդի դուրեկան թափթփիւած ութեամբ ներս ընկար:

Մի ըռպէ շուարած եղնիկի աչքերդ ինձ նայեցան, անմեղ այլայլման մի կարմիր պատեց դէմքդ ու դու անխօս դուրս թռար:

Անակնկալից ես էլ էի շուարած:

Եղբայրդ արդէն վեր էր կացել:

Պատուհանից ներս ցոլացող արեւի առաջին ճառագայթներին նայելով, ասաց.

— Նա մեր Լուսօն էր. ճանչցա՞ր...

## II. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մենք իրար հետ ծանօթացանք այնպէս, ինչպէս ամենն են ծանօթանում:

Մի րոպէ նայեցիր աչքերիս, ես էլ քո, որոնց մէջ մի անուշ հէքեաթ կարդացի: Ընդունուած ձեւականութեամբ աջ ոտքդ քիչ հեռացրիր միւսից դէպի յետ, հոգուցդ փթթող ժպտիդ տակից, որ թամանակ շրթներդ գունատուեցին, ցոյց տուիր ատամներիդ մարգարտաշարն ու ձեռքդ ձեռքիս երկարացրիր:

Արդէն հագուատդ փոխած էիր ու դպրոցական համազգեստիդ մէջ, աւելի գրաւիչ:

Չգիտեմ ինչի, ես երջանի՛կ էի, անչա՛փ երջանիկ:

Կարճ լռութիւնից յետոյ, ասացիր:

— Ներեցէ՛ք, առաւօտեան ես չէի իմանում, որ եղբօրս սենեակումն էիք գիշերած, դրա համար այդքան անհոգ մտայ...

### III. ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

Եօթն օրուայ ծանօթներ էինք արդէն: Բնականից եղած, կազմուածքիդ քիչ թուլութիւնը, ճանապարհորդական յոգնածութիւնդ ու ծնողներիդ չափից ավելի գուրգուրանքն, ինձ համար բարեբաղդութեան մի առիթ հանդիսացան, արդիլելով, որ մի քանի օր դպրոց չ'գնաս:

Մինչդեռ տանն, երբեք ջմնացինք: Երկուսս էլ «կեանք»ից հեռու, երազկո՛տ, անո՛ւշ կեանքն էինք վայելում ու իրական կեանքը մեզ համար տենչերով ու ցանկութեամբ «հազար ու մի գիշերներ»ի ըստուերներն էր հագնում:

Դուռն ինձ երջանիկ էիր համարում, որ այդ տա-  
րին վերջացնում էի ուսումս, «մինչ՝ ես դեռ երկու  
տարի ունիմ», ասում էիր:

Հոգիներս փոխադարձ մի բան զգում էր, բայց  
չէինք արտայայտւում: Հայեացքների ժամանակ եր-  
կուսս էլ խոյս էինք տալիս:

Շա՛տ խօսեցինք, շատ բանի մասին խօսեցինք:

\* \* \*

Ոսկերչի խանութից երբ դուրս ելանք, որտեղ ես  
քեզ համար մի «յիշատակ» էի պատուիրել, առաջար-  
կեցի քեզ, փողոցի անկիւնում կօշիկներդ ներկել տալ  
ու ես էլ մօտդ կանգնեցի:

Այդ պահին ներկայացաւ ինձ, հաշմանդամ, թը-  
խադէմ, ջահել մի մուրացիկ ու պարզ լրջութեամբ  
քեզ ակնարկելով, ասաց.

— Եարիդ արեւին մի ողորմութիւն արա՛:

Դու ժպտացիր, ինչպէս նաեւ ես ու տուի նրան  
այնքան՝ որքան երբէք չեն տալիս փողոցի մուրաց-  
կանին:

#### IV. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Յիշո՞ւմ ես. մենք մինչեւ մեր դուռը՝ ճանապար-  
հին ոչինչ չկարողացանք խօսել:

Եւ ոչ մէկ խօսք չէր արտայայտի այն ամենն, ինչ  
որ մենք էինք զգում, ինչ որ լռութիւնն էր ասում:

Զիւնահալք էր:

Գարնանամուտի գաղջ արեւի ճառագայթներն ,  
իրանց կենսատու ազդեցութեամբ պատել էին եր-  
կիրը :

Մթնոլորտն ու ամբողջ մարդկանց հոգին , զե-  
ղուն էր խինդ ու խաղով , բայց ոչ մէկն էր գերա-  
զանցում մեզ :

Հիւսիսային քամին , իր տաք շնչով , լեռների կա-  
տարներին ձիւն չէր թողել գրեթէ : Ամեն տան տա-  
նիքի խողովակներից ջուր էր հոսում :

Բոլոր դպրոցականներն , իրենց կէսօրուայ տուն  
վերադարձին , արդէն տաք-քամու համբոյրը կպած ,  
ջրալից ձիւնից գնդակներ էին շինում , խփում էին  
իրար ու անցորդներին :

Յիշո՞ւմ ես , բաւական տարեց մի տղայ էլ մեզ  
զարկեց , երբ թեւանցուկ գնում էինք :

Ուզեցի պատասխանել , չ'թողեցիր :

— Ընկերուհու եղբայրն է ասացիր . ինձ հան-  
դէպ անտարբեր չէ՛ , չ'նայած նրան , որ երբէք առիթ  
տուած չեմ :

Մի պահ , աչքերս հոգուս հետ այդ տղին դար-  
ձան : Խոշոր , կապոյտ աչքերի մէջ անհուն մի թա-  
խիծ կար խանդի փայլատակումով եւ սրտին վրան  
էլ կարմիր մի վէրք , որ դուն էիր բացել . . .

## V. ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Ժամը տասնի մօտ է :

Ես ու դուն մենակ ենք ձեր դահլիճի փարթամու-

Թեան մէջ : Առաստաղից կախուած կապտագոյն լամբը , ելեքտրական լոյսին ու նրա ցուքերի տակ գըտնուող առարկաներին առանձին մի խորհրդաւորութիւն է տալիս :

Ես ընկողմանած պատին , մասամբ աջ , արմըկած առաջս գտնուող սեղանին , նայում եմ դէմքիդ , քեզ՝ որ սեւ ու կոկ շորերիդ մէջ միգանուշի կերպարանք ես հագել :

Ածուխից էլ սեւ գիսակներդ , մինակ քեզ վայլող անկարգութեամբ , շրջանակել են ձուածեւ տպիտակ դէմքդ .

Աչքերդ՝ չարագուշ գիշերուան նման , անակընկալների ու խենթ ընդվզումների հանդարտ ծփանքներ են ունենում , որոնց յանձնուող մահկանացուն իր կեանքն էլ չխնայի , միայն թէ , վերջ չունենա՛ն , վերջ չունենա՛ն այդ ծփանքները :

Ճօճաթուիդ մէջ , երազներով էլ , օրօր , նստած՝ վայրկեանն ես ապրում , որ բոլոր բաժակներից արբեցուցիչ է :

Ձեռքդ տարար շրթներիդ , որոնք նրա սեղման տակ քիչ ճերմկցան իրենց ալ-կարմիրից ու փոքր բերանդ կարծես թէ քիչ մեծցաւ համաչափ ու արտայայտիչ դէմքիդ վրայ :

Մենք վերջացրել էինք մի անո՛ւշ ընթերցում :

Հարեւան սենեակները վաղուց քնել էին : Սիրունատես , ջահել , ոռւս աղախինն , որ այդ պահերի ու նրանց վայելքների անծանօթ մէկը չէր , գնահատողի մաքուր համբերատարութեամբ , սեղանատանը նըս-

տած մոռացող կատուի հետ, գուլպայ էր գործում :

Ուղեցի մօտ գաս . Եկար :

Մենք մէկ իրար նայեցինք, մէկ էլ մեր կողքի սենեակի դրան, որի յետև մայրդ էր քնում ու մեր թեւերով բարեկամական պատնէշները քանդելով շրթունքների եւ հոգու անքակտելի դարպասներ շինեցինք :

\* \*

Երբ սեղանատուն գնացինք, որտեղ մեր թեթեւ ընթրիկը պատրաստ էր արդէն, ուստի աղջիկը մեղմ, քաղցր ժպիտը դէմքին, բարեկամօրէն ասաց .

— Ես շատ ուրախ եմ, հոգեակներս, հազար երանի ձեզ . վայելէ՛ք կեանքը . . .

## VI. ԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Նոր ընթրեցինք բոլորս ու ձերոնք քնեցին . եղբայրդ Ֆրանսերէն մի հատուած անդիր անելուց յողնած, մայրդ էլ տան հոգսերից :

Իսկ տատդ այնքան ծեր է, որ ցերեկներն էլ է քնում, ուր մնաց հիմի, որ ժամն արդէն տասներկուան է . նա երեւի հիմի երազում հրեշտակների հետ է :

Հայրդ էլ, դեռ չի եկել հասարակական ակումբից, որտեղ մշտական թղթախաղով է զբաղուած . մի զբաղմունք՝ որ նրա նման յիսուենն անց եղող մարդկանց մեծամասնութեան համար մի ապրում էլ է :

Չերոնց կիսամբրափին ու իմ մէկ վերարկուիս  
տակ, դուրս ելանք երկուսով.

Տաք սենեակից անմիջապէս մեր դուրս դալը  
դուրեկան մի սարսուռով պատեց երկուսս էլ.

Վերարկուս բոլորովին քեզ տալ սւգեցի, չ'ուզե-  
ցիր:

—Երկուսով մէկ վերարկուի տակ եմ ուզում,  
ասացիր.

Մօտեցանք պարտէզի հաստարուն խնձորենուն,  
ու նրա տակը նստարանի վրայ նստեցինք.

Մեր բակում ապրող, հարեւան ուս դիմնազիս-  
տը, քո հանդէպ որոշ զգացումներով լեցուած, որ  
ես հասկանում եմ, մօտ տասն անգամ դուրս ելաւ ու  
ներս մտաւ, ամեն անգամ դուռը պատին տալով, որ  
ահագին աղմուկ էր հանում խոր լռութեան մէջ:

Վերջին անգամ, որպէսզի առիթ ունենայ աւելի  
երկար դուրսը մնալու, բռնեց իր շնիկի թաթերից ու  
սկսեց վարժութիւններ անել տալ:

Խեղճ շնիկը չէր կարողանում կատարել, որի հա-  
մար էլ սոսկալի ծեծ էր ուտում յիմար դիմնազիս-  
տից:

Չգում էիր, որ ես չարանում էի:

—Անտարբեր գտնուիր, բոլորովին անտարբեր,  
ասացիր.

\* \*

Քո բարձրաձայն ծիծաղը ճակատագրական մի  
հարուած եղաւ դիմնազիստի համար, որ շնիկը թո-  
ղած, գրեթէ տուն փախաւ:

— Ես չ'գիտէի, որ դուն այդպէս յայտնի ռազմագէտ ես եղել ասացի :

— Ծիծաղը կանանց համար մի մեծ զէնք է արհամարհած տղամարդին ուղղուած : Նա այնքան չէր ազդուի քո մի ասպտակից, ինչքան իմ ծիծաղից :

— Ուրեմն հարկաւոր է ռազմագիտութիւնդ վարձատրել. ինչո՞վ կարող եմ :

Անո՛ւշ նազանքով ասացիր :

— Մի համբոյրով . . .

— Այդ ժամանակ դու ինձ կրկնակի պարտքի տակ կը գցես :

— Հաշիւներն ես չեմ սիրում, գիտե՞ս դուն ինձ . . . . .

\* \* \*

Ինչքա՛ն արբշիռ էր պահն ու ինչքա՛ն գեղեցիկ . . .

Այնուամենայնիւ ես պարտ էի քեզ այնպիսի մի բան, որի բնորոշումները շատ խեղճ են լինում, լեզուները կարկամ :

Մինակ հոգիների գերմարդկային անկեղծութիւնն է զգում :

## VII. ԵՐՐՈՐԴԻ ԳԻՇԵՐ

«Դեռ եւս պատանի, հազիւ տասներկու տարեկան, ես թողեցի հայրենիքս, որի կարօտը մի վիշտ է եղած սրտիս :

Դրանից շատ քիչ առաջ, պատահականութիւնն ինձ զրկած է մայրական ամենաանուշ գուրգուրանքից, որն այդ տարիքում գտնուող մէկի համար կեանքից շատ աւելի թանգ արժէք ունեցող մի զգացում է:

Հայրս է փոխարինած դրան, ամենանուիրական զոհաբերումներով:

Շատ տեղեր եմ տեսած, շատ երկիրներ ման եկած, որոնք ինձ սորվեցրած են կեանքին բոլոր ելեւէջ ձախողանքներն ու յաջողութիւնները, իրենց խորունկ խորհրդների հետ:

Պատանի հոգիս շատ շուտ է ճանաչած թէ լըքման եւ թէ արբեցման բաժաններ: Կամքս խարխախ է հանդիսացած յոյսիս ու աշխատանքներս միջոց՝ նպատակիս հասնելու:

Ամեն բան արած եմ «յանուն հաճոյքի ու տառապանքի գեղեցկութեան», որոնց կատարման պահուն մշտական քննադատողի ու գեղապաշտի ապրումներս պահակ են կանգնած արդիւլելու համար բնազդներիս սանձարձակութիւնը:

Անո՛ւշ աղջիկ, վայ նրանց, որոնց բնազդները սանձ չունին: Սանձ՝ ոսկէ երազներից, արծաթ խոյանքներից, կարմիր ձգտումներից:

Մի պատառ հացը շատ անգամ ստիպած է ինձ մտնել փողոց, բայց հոգիս երբէք չէ որդեգրած փողոցի կեանքը: «Վարը» եղողներին մօտից եմ ճանչցած, որոնց համար այն ժամանակ կարեկցութիւնից դատ ոչինչ եմ տուած, իսկ հիմի ու ապագա-

յին որոշած եմ տալ կեանքս, այն՝ ինչ որ թանգ է  
ամեն բանից :

Առօրեայից մշտական վեր եմ ապրած ու դա  
հողուս հանդստի հանդրուաններից մէկն է եղած» :

Դու ուզեցիր ու ես քեզ պատմեցի այս բոլորը :  
Լաց եղար դուն ու խանդաղատանքով փարուեցիր  
ինձ :

Մի փարում, մի մօտիկութիւն, որն երկնքի ու  
նրա ստեղծող Աստծու նախանձը շարժեց, որի վկայ  
էին խաւարն ու համատարած լուսթիւնը :

— Շա՛տ դժուար բան է. շա՛տ մեծ բան է քեզ  
սիրելը. ո՞ր հողին կարող է չափել հողուդ տառա-  
պանքը, որ անհունին է ու մարդկութեան. ո՞ր սիր-  
տը կարող է զգացումիդ վերելքը քանդակել, որ  
արծւի թեւերին են կապել . . .

Ու մենք փաթթուած նորից լացինք. մի լաց, որ  
բոլոր լացերից տարբերում էր :

Երկու ներդաշնակ հողու բնութեան դէմ տարած  
յաղթանակի լացն էր դա :

Եւ ի՞նչ խոշոր էին քո արտասուքի կաթիլները . .

Նրանից վերջ այնպէս սիրեցինք իրար, այնպիսի  
մի սիրով սիրեցինք, որ նրա յիշատակների վրայ  
մինակ սպիտակ տատրակները թուխս նստան :

## VIII. ԶՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Բակին անկիւնն, երկու լալիան ուռիների ըստ-  
ուերին տակ մի ջրհոր կայ :

1

Կէս մարդահասակի մի պատ չորս կողմից շքր-  
ջապատած է ջրհորը: Պատի կողքին հաստ մի սըռ-  
նակի վրայ ամրացուած է մի անիւ, որը ջուրն հեշ-  
տութեամբ վեր հանելու համար է ծառայում:

Երկու օր է այդտեղ ենք դնում, թիկն ենք տա-  
լիս պատին ու խօսակցում:

Ջրհորը շատ մռայլ տպաւորութիւն է թողնում  
ինձ վրայ: Նա անհաղորդ է թէ՛ կէս օրուայ արեւի  
տաք համբոյրներին եւ թէ լուսնի երազներին, երբ  
աշխարհին տարպասելուց յողնած, իր դէմքը դի-  
տելու պիտի դար անըջասէր կոյս հողիների նման:

Միջոցին մէջ ոչինչ կայ մեզ խանգարող, բացի  
հարբած, ուս մի զինուորից, որն ո՛վ դիտէ իր  
հողիի ո՛ր մեծ վիշտը դացել է Բագոսի անդգայու-  
թեան ու մոռացութեան յանձնելու:

Ունկնդրութիւնս քեզ հրաւիրելով ասացիր.

— Մայրիկս քեզ ոչինչ չէ՞ պատմել: Այս շքր-  
հորն իր սեւ պատմութիւնն ունի:


Եւ սկսեցիր պատմել:

«Մեր տանտիրուհին ճանաչում ես, որի գանգին  
վրայ տարիներն ու վիշտը արդէն ձիւնել են. դիտե՞  
որ այրի է:

Սրանից տասը տարի առաջ նրա միակ որդին,  
համալսարանը վերջացնելուց յետոյ, կգայ այստեղ:

Ինքը դիւղատնտես է եղել: Մշտական «հողի  
մարդկանց» շրջանում:

Մաքուր սրտով, մեծ հողիով մի երիտասարդ,  
որն իր ըմբռնումներին համապատասխան «գաղտնի



մի ընկերութեան» է փարում ու մեծ աշխատանքներ ունենում :

Վարուած մի անիմաստ կռուի պատճառաւ զօրակոչութեան է ենթարկւում :

Նա արհամարհում է սպայական ուսղիւրներն ու դառնում հասարակ նաւազ Ս . նաւարաժնում :

Նա չի դադրում գործել նաեւ այնտեղ :

Վերջապէս ընկերներով յաջողում է կազմակերպել նաւարաժնի ապստամբութիւնն , որն ինչ ճակատագրական վախճան ունենալուն մասին , կարծեմ , լաւ գաղափար ունիս :

Ըմբոստների պարագլուխը լինելով , նա կախւում է նաւին կայմին վրայ :

Բօթաբեր տեղեկութիւնն զգլխիչ ազդեցութիւն է ունենում հօրն համար , որն իւր սիրելի որդու մահից յետոյ , խենթացած , իւր տառապանքը պարտկելու վայր , այս ջրհորն է դարձնում :

Հարեւաններն իմանում են , լուր են տալիս կառավարութեան ու խեղճի դիակն հանում ջրհորից» :

— Ճիշտ որ սեւ պատմութիւն ունի այս ջրհորը : Հօր վիշտը , մանաւանդ սիրող մի հօր վիշտը չափազանց մեծ է , բայց ինքնասպաններին , չնայած նրանք սովորական հոգի չեն կրում իրենց վրայ , ես չեմ սիրում :

Կեանքն հրաշալի մի բաժակ է : Այդ բաժակը խաթարուած է այսօր իւր մաքրութիւնից :

Ամեն ինքնազոհութիւն այդ ուղղութեամբ պիտի անել :

Ես, աւելի շուտ իրենց տառապանքին մէջ սիրում եմ կայմին վրայ կախուող որդու յիշատակը քան յուսահատ հօր ջրհորամուղ վիշտը.....

\*  
\* \*  
\*

Սոր լուսթիւնը կտրեց կառախմբի շոգեշարժի խռպոտ սուլոցը:

Ժամը մէկն է. գնանք անո՛ւշ ջան...

## IX. ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԳԻՇԵՐ

Շարաթ գիշեր էր:

Մօտակայ բլուրը գնանք, ասացիր:

Հակառակ մօրդ պնդումին՝ դուրս գալու ժամանակ չ'ուզեցիր հազնել վերարկուդ, առարկելով որ արդէն այնքան տաք է, որ կարելի է եւ չ'հազնել:

Քաղաքը արբեցման պատրաստուող ջահելի տըպաւորութիւն էր թողնում:

Եղանակը կիսամպոտ էր, բայց կարծես թէ այդ բոլորը չքանալու էր:

Այնուամենայնիւ այդ աւելի խորհրդաւոր էր իր գորշութեան մէջ քան Մայիսի լուսնեակ գիշերների աչք ծակող, շռայլ ցուցադրումը լոյսի:

Ինքնաշարժներն ու ելեքտրաքարշերը արագ ընթացքով ժողովրդին զանազան զբօսավայրեր ու հաւաքատեղիներ են փոխադրում:

Մենք գերադասեցինք քայլելը:

\* \* \*

Կէս ժամից հասանք բլուրի ստորոտը :

Սոնաւոլթիւնից նոր ազատուած մայր երկիրը լուրթեան մէջ, գրկուած դալուկ լուսնեակի հետ, բեղմնաւորման մեծ խորհուրդն էր ապրում, ըսպասելով վաղուայ արեւից տաք համբոյրներ :

Երկուսս էլ, մեր չարածճի վազվզումների ու իրար հետապնդման սլատճառով քիչ յոգնել էինք :

Ես վերարկուս փռեցի գետին, նստայ մի ծայրին, քեզ աւելի տեղ պահելով, բայց դուն աւելի մօտ նստեցիր ու գլուխդ դրիր ծնկանս :

Մագերիդ փրփուրն հասաւ մինչեւ վիզս : Ինչքան հրաշալի մահ կը լինէր դրանց մէջ խեղդուելը . . .

Երկինքն էլ ուրախացաւ կարծես :

Ամպերն արդէն ցրուած էին եւ ջինջ կապոյտի միջից լուսինն իր վեհ ու հեզ սահանքն էր անում :

\* \* \*

Եւ մենք բարձրանում էինք ուսընդանուր :

Ի՞նչ անուշ վերելք էր . դու մշտական վերարկուիս երկար քղանցքից բռնած կասեցնում էիր ընթացքս, որ ժամանակ դուրեկան բաղխումներ էինք ունենում :

Արդէն բլուրը բարձրացանք :

Փոքրիկ, սիրուն մի բարձրաւանդակ է, ժայռ

նստարաններով . կարելի է «սիրոյ բլուր» կոչել :

Մի տեղ է դա , որ շատ քիչ խանգարողներ կու-  
նենայ :

Բլուրի մի անկիւնում դեռ եւս ձիւն կար , որն  
հալուելով փոքրիկ , կարկաչուն մի առուակ էր կազ-  
մում : Նոր խօսել սովորող երեխայի երգը լինէր  
կարծես :

Ի՞նչքան ուրախացնող էր :

Քաղաքն իր ամբողջ համայնապատկերով մեր  
առաջն էր :

Աչքի են խփում ամենից առաջ փայլուն գլմ-  
բէթաւոր շէնքերն իրանց նշաններով , ապա բոլոր  
բարձր հիմնարկութիւններն ու ամենից յետոյ քա-  
ղաքը կազմող շէնքերը , քառակուսի , զուգահեռ փո-  
ղոցներով :

Փողոցների մէջ , տեղ-տեղ երեւացող ծառուղի-  
ների կանաչ զանգուածները մութ ստուերների տեսք  
են հագել :

Հեռում , քաղաքի միւս եզերքը հոյակապ կա-  
յարանի բարձրադիր շէնքերի յետեւում , ոլորապը-  
տոյտ երիզում է մի գորշ շարժուն վիշապ , որի  
պոչը կորսւում է մթութեան մէջ :

Աջ կողմը սեւ դաշտին մէջ աշխատաւորը թո-  
ղել է իր գութանն ու սայլը : Նա վաղը նորից կգա  
իր աշխատանքը վերսկսելու : Աշխարհին կերակ-  
րողի սեւ գործիքը վեհ պատկառանքով ծուարել է  
կէս մարմնով հողի մէջ :

\* \* \*

Անուշ ծիծաղի անմեղ վանկեր զեփիւռի թեւե-  
րով տարածուամ են միջոցին մէջ :

Ուրիշներ էլ կան ասացիր :

Լուսինն անցաւ մի կտոր ամպերի տակից կա-  
պոյտի մէջ իր երկայն լողանքն անելու, որի ստինք-  
ների կարմիր պտուկներից լուսաւորուեց արար աշ-  
խարհը ցերեկուայ նման :

Տեսայ դէմքիդ ամբողջ արտայայտութիւնը .  
չրթներդ համբոյրի կարօտից դողդողում էին, իսկ  
աչքերդ վայելքի ու տենջանքի տուայտանքն էին  
ասլրում :

— Եկո՛ւր անո՛ւշ աղջիկ, եկո՛ւր, հոգուս հո-  
գին . . .

Վայրկեանի միակ հանդիսատեսն է մերկ ու  
թաց լուսինն, որը լողանքն արած արդէն մարմինը  
սրբում էր ամպերի քօղերով :

Ես քեզ մի ծաղկեփունջ նուիրեցի :

— Ի՞նչ հրաշալի են նոր բացուած ձիւնծաղիկ-  
ներն, ասացիր :

\* \* \*

Մի մրափի անո՛ւշ ջան :

\*

Քաղաքային տան ժամացոյցը խոր լուութեան  
մէջ երկուսը խփեց :

— Օ՛հ, ինչքան ո՛ւշ է. հիմի նրանք մեզ կը  
փնտռեն :

## X. ՎԵՑԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Երեք օր էր, որ հիւանդ էի :

Նախանցեալ գիշեր քրտնել էի ու մրսել : Տաքսի-  
ցընում էի եւ ինձ բռնորովին թոյլ զգում :

Դու էլ դպրոց չէիր գնում : Առաջին օրը գնացիր  
ու կէսօրին վերադարձար, պատճառաբանելով, որ  
դու էլ քեզ թոյլ ես զգում :

Մի ժամ առանձնացար սենեակումդ ու ապա ե-  
կար ինձ մօտ :

Մայրիկդ գթոտ հոգածութեամբ նստել էր կող-  
քիս : Տաքութեան մէջ ինքնակորոյս թեւերս հանել  
էի վերմակի տակից. ճակատս ու այտերս այրւում  
էին անօրինակ տաքութեամբ, իսկ շրթներս կարծես  
պատռուելու էին. բերանս բռնորովին չորացել էր :

Ես անդադար խմել էի ուզում, որ միանգամայն  
բժիշկի կողմից արգիւլուել էր :

Խօսում էի թոյլ ու դանդաղ :

Կողքիս դրուած էր մի աման սառը ջուր :

Աղախինն անդադար սպիտակ քաթանի երկու  
կտորներ սառցնում էր ու հերթաբար ճակտիս դը-  
նում :

Երեք օր էր, որ բժիշկը գալիս էր, բայց հաս-  
տատ ոչինչ չէր ասել. այսօր պիտի ասէր :

«Քիչ մըսել է, թեթեւ տաքութիւն ունի, կանցնի», ասել էր քո հարցին:

Դեղին տուփի մէջ դրուած քինինի բաժինները մնում էին. ես երբէք չէի սիրում դեղ գործածել, նամանաւանդ՝ քինին:

Կէս օրուայ դէմ նայեցի հայելին:

Բաւական նիհարել էի. աչքերս կարծես խորն էին ընկել ու կոպերս սեւացել:

Մի բաժակ կաթ բերիր ու գլխուս հոգատարութեամբ առաջարկեցիր, որ խմեմ:

Ձեռքդ դրիր ճակտիս ու ասացիր.

— Տաքութիւնդ բաւական անցել է:

\*  
\* \*  
\*

Արդէն մութ էր:

Կլոր, փոքր սեղանի վրայի լամբը վառեցիր ու կողքիս մահճակալիս վրայ նստեցիր: Չափեցիր ջերմութիւնս, երեւում էր, որ նորից տաքութիւնս բարձրանում էր:

Չեմ կարողանում տանել, լամբի լոյսն հանգըրու, ասացի:

Օդը բաւական ծանր էր թւում թոքերիս:

Խնդրեցի, որ սլատուհանի մի փեղկն անգամ, բաց անես:

Ո՛հ ինչ գեղեցիկ էր. դարնանային թարմութեան հոտ էր փչում: Դուն յոգնած էիր, մայրդ ասաց, որ զնաս հանգստանաս: Լամբը նորից վառեց ու կողքիս նստած, ձեռքը դրեց ճակտիս:

\* \* \*

Բոլորը գնացին քնելու :

Ես թեթեւ մրափում էի :

Քրտինքի սառը կաթիլներ պատել էին գունատ ճակատս . կիսաինքնագիտակցութեան մէջ մի ընկալի սենեակս թուաց մի խոր դամբարան :

Սիրտս փղծկում էր :

Կարծես մի սոսկալի ծանրութիւն եկել, ընկել էր նրա վրայ ու անգթօրէն ճզմում :

Պատուհանիս մէջ սպիտակ, թաւ կատուն համուտում էր դունջը թաթերի մէջ առած : Առաջին պահ ուզում էի նրան խեղդել, այդքան նիարդացուցիչ ազդեցութիւն էր ունենում վրաս . . .

Բայց այնուամենայնիւ նա իմ միակ ընկերս էր . . . Տարօրինակ ցանկութիւն ունեցայ մօտենալ, գրկել այդ անբան արարածին, անգամ համբուրել ու փարուել նրան :

Գլուխս սոսկալի ցաւում էր ու մի անտանելի դառնութիւն էի զգում լեզուիս վրայ :

Կէս գիշեր է :

Լուսնի լոյսն ընկաւ սենեակս, հաստ վարագոյրների ժանեակների միջից :

Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ լամբը մի հանգնող լինէր : Նայում եմ պատուհանից դուրս . ի՞նչ խաղաղ գիշեր է . ինչքան խորհուրդ կայ այդ խաղաղութեան մէջ :

Վիզս յոգնեց ու նորից գլուխս դրի բարձիս

փափկութեան մէջ ու ինձ համար չափազանց կարօ-  
տակէզ հայրենի տունս յիշեցի . . .

\*  
\* \*

Մանուկ էի, մի անգամ երբ հիւանդացայ :  
Դաշտում անձրեւի տակ էի մնացել ու մրսել :  
Մայրս սնարիցս չէր հեռանում . . .

Կաթ, մածուն, ձու ուրիշ էլ ինչ լաւ կերակուր-  
ներ ասէք չէին եփում, որ ես ուտէի, բայց ես ոչ  
մէկից չէի ուտում :

Տունը կարծես սուգ էր հագել. հայրիկս սովո-  
րականից շուտ էր վերադառնում դաշտից. քոյրերս  
շուրջս նստած լաց էին լինում. բերել էին իմ նորա-  
ծին դառնուկս, հետը խաղ չէի անում :

Յիշում եմ . . . . .

.....

\*  
\* \*

Կարօտի մի տաք սառսուռ հոգիս. փոթորկում  
է. անասելի կարիք եմ զգում անո՛ւշ գուրգու-  
րանքի . . .

\*

Ես վաղուց արդէն հեռացել եմ այդ տանից :  
Այդ տանտեղն այժմ մի աւերակ է :  
Ոսկորներով լեցուն է այդ աւերակը :  
Առաջն այլեւս պարտէզ չ'կայ. ոչ էլ այն ուռին,  
որից ես իմ առաջին սրինգս շինեցի :

Ո՛չ էլ իմ այն ձեռատունկ վարդենին ու սիրուն  
ծաղկանոցը :

— Քո՛յրիկ ջան , քո՛յրիկ , ի՞նչ ես անում այդ-  
պէս մենակ . աւերակների մէջ ինչի՞ ես նստել . . .

Մազերդ ինչպէս անսանտր ընկել են ուսիդ ,  
գործուած թաղիքի նման . մարմինդ ինչպէս անմա-  
քուր է . քո այն գեղեցիկ աչքերդ ինչպէս խամրել  
են . ո՞ւր է մայրիկը . մեծ քոյրիկը . վանիկը . . . դու  
լաց ես լինում հա՞ . . .

\*  
\* \*

Երկար ժամանակ ես լաց էի եղել :

Ինչ լաւ բան է կարողանալ լաց լինելը :

Դուք տեսե՞լ էք տեղատարաւի անձրեւից յետոյ  
փայլող պայծառ արեւն ու կապոյտ երկինքը . . .

\*  
\* \*

Դու կիսամերկ , ճերմակիդ մէջ բոլորովին ճեր-  
մակ , մազերդ արձակ , ընկել էիր մարմնով կողքիս  
ու շրթներդ տաք այտերիս էիր հպել ու ձեռքերովդ  
գրկեր էիր գլուխս . . .

— Ո՞ւմ հետ էիր . ի՞նչ ես ուզում . ի՞նչի էիր  
լաց լինում , ասացիր . . . . .

## XI. ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Վեց օր է , որ վեր եմ կացել . գտել եմ նախկին  
առողջութիւնս ու տրամադրութիւնս :

\*  
\* \*

Հարեւան պառաւ աղջիկը , որ նուագելը մանիա  
է դարձրել արդէն , ինձ ձանձրացրեց այս գիշեր :

Սկզբում պարերդ էր , հետը նաեւ ծափերի ձայ-  
ներ էին գալիս . ուրեմն ուրիշներ էլ կային մօտը :

Ապա մի տխուր պալլատ էր . վերջը մի աղեկը-  
տուր Բայաթի եւ նորից ցնծերդ :

Կուզէի , որ հա՛ նուագէր այդ , որովհետեւ  
հոգուս դուր էր գալիս :

\*  
\* \*

Դուն չ'կայիր . չ'գիտեմ ինչի , ուշացար . ես ըս-  
պասում էի , որ գնանք զբօսարան :

Դուն չեկար ժամադրուած վայրկեանիդ :

Մի ժամ էր անցել , երբ ընկերուհուդ հետ ներս  
մտար :

Ընկերուհիդ մեր մասին ամեն ինչ գիտէր . նա  
բարեւեց անուշ յարգանքով իսկ դուն թեւիցս բըռ-  
նեցիր ու տարիր առանձնասենեակդ :

Ես նստեցի , կողքիս էլ ընկերուհիդ :

Երկու ձեռքերդ դրիր երկու ուսիս , դէմքդ ու-  
ղիղ դէմքիս բռնած , սրտաբաց մօտիկուլթեամբ ,  
ասացիր .

— Չես բարկացել չէ՞ , որ ես ուշացայ :

Հայեացքս անխօս ամեն բան պատմեց եւ դու  
վստահ եւ ուրախ ինձ ժպտացիր :

— Ասելիք ունիմ , ասացիր :  
Ուզեցի լսել ու դուն պատմեցիր :  
Կարծեցի երգ էիր ասում , այնքան դուրեկան էր  
այնքան զգլխիչ :

\* \* \*

«Մարիան ընկերուհիս է , գիտես արդէն :  
Սիրել է , այն էլ գիտես . ինչպէս մենք սիրե-  
ցինք , ինչպէս ոչ ոք պիտի սիրի այնպէս :  
Թնդանօթածիզ սպայ էր նա . ինչպէս շատերն ,  
այնպէս էլ նա գնաց պարտականութեան հրամայա-  
կանի թելադրանքովը :  
Եւ անհատական ու հոգեբանական միջավայրի  
անհրաժեշտ ստիպումով , իրան նման շատ շատերին  
դրաւ , իր հետ , կրակի մէջ :

\* \* \*

Պատմում են , որ , ինքն այլեւս ոչինչ չի յի-  
շել :

Մինակ հաստատ իմանալիս է եղել , որ իր մարտ-  
կոցի շեշտակի հարուածների տակ , մեր այրուծին  
գրոհով մտել է թշնամի անառիկ քաղաքը . . . . .

\* \* \*

Սիրուն , մաքուր , լաւ կահաւորուած հիւանդա-  
նոց : Շէկ , նուրբ դիմագծով , բարձրահասակ , գեղե-

ցիկ կանայք, սպիտակ խալաթներով:

Վեհօրէն մարդկային վերաբերմունք: Անո՛ւշ,  
հարազատ, կանացի հոգատարութիւն, ահա նրա  
հիւանդանոցի մթնոլորտը:

Եւ երբեմն ցածր, գորովոտ հայեացքով օտար  
բառեր, որ ժամանակ դժուար սովրելուն համար իր  
ուսուցչից թոյլ էր ստացել:

— Wollen Sie trinken? ...

Փնտուել էր մէկի ներկայութիւնը, որն երբէք  
չէր գտնելու:

Կրկնել էր շատ անգամ:

— Մա՛րի... Մարիա... Մարի...

Ես սարսուռ զգացի ու Մարիան սկսեց լաց վի-  
նել մեր կողքին:

Կարողացար հանդարտեցնել նրան ու շարունա-  
կեցիր:

«Անհրաժեշտ են գտել անդամահատել...»

Երրորդ օրը մինա՛կ տաքութիւն չէ ունեցել մի  
ժամով եւ գրել է ա՛յս նամակը:

Ու յանձնեցիր ռուսատառ, մի էջն էլ գերմանե-  
րէն մի նամակ: Խնդրել էր, քոյրերից մէկն էր գրել:

Կարդացի նամակը. լուռ էինք:

Ու անխօս սգերդն երգեցինք բոլորս առանձին  
մեր հոգիներում: Դուք ձեր՝ ես իմ ու այն ամենի  
համար...

Ու մի անգամ էլ հոգիս ողբաց բոլոր «անյայտ  
ու անզարդ» շիրիմներն՝ հայրենի տանից սկսեալ  
մինչեւ հողմավար «ոսկորը Պոմերան»:



— Յիշո՞ւմ ես, Լուսօ ջան :

Ամսի տասներհինգն էր :

Ամպերը պատել էին երկինքն ու լուսինը չքացել էր : Մի սոսկալի պաղ քամի ամեն ինչ խառնում էր իրար :

Չորս օր էր, որ դուրս չէինք ելած . ֆեզ...

Մանաւանդ ինձ համար անհրաժեշտութիւն էր : Պարտիզում գտնուող բարտիների դադաթներն ուժեղ շառաչմամբ փարւում էին իրար, խառնելով իրենց ասեղ վայնասունը քամու մեղմ լացի հետ :

Դուն քիչ տխուր էիր ու լուռ :

Երբ ես հարցրի պատճառը, «յետոյ կասեմ» ասացիր :



Ես ցանկացայ լինել այդ պահին անտառում :

Դու տեսե՞լ ես անտառը յուզուած :

Ապրե՞լ ես այդ յուզումն հոգուդ յուզման հետ :

Լսե՞լ ես այդ ծառերի զարկերի բնական, վայրի համերգը : Ո՛հ, ինչքա՛ն կեանք կայ նրանց մէջ :

Ամէհի դադանների նման փրփրել են բնութեան տարրերը : Հողմերը սրնթաց ձիերի նման վրնչում են թուք ու փրփուր ցայտելով :

Երկինքն ու երկիրը կռիւ են մղում իրար դէմ : Կայծակն անընդհատ խփում է մի վայրկեան երկիրը ելեքտրական ուժեղ լուսով լուսաւորում է ու ապա նորից խաւարը պատում :

Անձրեւի խոշոր կաթիլներ մի ընդէ տեղետա-  
րափ թափւում են ու ապա հողմավար քշուելով,  
դադարում :

Մենք նստած ենք անտառապանի դեռ եւս ա-  
մայի, կիսախարխուլ խրճիթում :

— Ի՞նչ լաւն է. ես սիրում եմ : Չէ՛, չ՛գնանք  
ասացիր ու փաթաթուեցիր ինձ :

\* \* \*

Քամին իր մրրկայոյզ երգն է երգում, ահե՛ղ,  
ո՛ւժգին երգը :

Լռութիւնը մեր ընկերն եղաւ ու չրթներիդ կար-  
միրը մեր վայելքի նեկտարը :

Չ՛գնա՛նք. սիրուն է այս բոլորն, ասացիր նորից :

Եւ չ՛գնացինք մինչեւ բարտինների գագաթները  
կոտրած ճնկան, մինչեւ արծիւներն հողմավար, ծո-  
վակուլ չեղան, մինչեւ նաւերը հեռաւոր ծովերում  
իրանց կայմերի ճռինչը չ՛լսեցին :

Ինչպէ՛ս գալիս է մարդկանց ծովասոյզ ողբն  
ու աղաղակը . . . ինչքան մօ՛տ էին նրանք . . . . .

\* \* \*

Ամպերը կամաց-կամաց ծլատուեցին քամու  
հարուածների տակ : Անձրեւն արդէն դադրած է :  
Անտառի աջ կողմից, եղեւնիների բարձրադիր գա-  
գաթից դուրս եկաւ հեզասահ լուսնեակը ամօթխած  
կոյսի նման :

Երեք ժամ է անցել ամբողջ . . .

Յառաջանում ենք դէպի տուն : Յօղաթուրմ խոտերի միջից անցնելու ժամանակ երկուսիս ոտներն էլ թրջուեցին . շուտ աղատելու համար , իրար ձեռք բռնած , սկսեցինք ցատկելով անցնել դէպ աւազածածկ ճանապարհը :

Դու քիչ շառագունել էիր ու նաեւ թեթեւ քրքրանել : Ես սրբեցի թաշկինակով ճակատդ :

Աշխատում էիր արագ շունչ առնել :

Կուրծքդ յուզուած էր :

Հասանք , մինակ այդ երկրին յատուկ , մի գեղեցիկ սրբատաշ քարերից շինուած աղբիւրի գլուխը :

Ուզեցինք քիչ նստիլ : Ես նստեցի քարին , դու ծնկանս ու թեւերիդ կիսամերկութեամբ օղակեցիր վիզս : Յուզուած կրծքիդ վէտվէտումը դադարեց կրծքիս ու աղբիւրի չափազանց դուրեկան կարկաչի տակ քուն մտար :

Ամպերի մի խումբ միջնադարեան գոթական ամրոցի ձեւով պարսպեցին լուսնեակին . . .

Մթնշաղի փոշիով ծեփուեց ամբողջ հորիզոնը .  
ինչքա՛ն գեղեցիկ է , ինչքա՛ն հրաշալի . . .

— Վե՛ր կաց անուշ ջան , լսո՞ւմ ես . . .

— Օ՛ , Մուէզինն է կանչում արդէն :

\* \* \*

Մենք վեր կացանք , մինչ դեռ մզկիթի բարձրութեան վրայ , ոսկեզօծ կիսալուսնի տակ , երիտասարդ Մուէզիննը , միակ ստուերը իր ցեղի հին գո-

յուլթեան , կանչում էր իր ամենասրտայոյզ , ամենա-  
սրտառու զվանկը . . .

— Ալլա՛հ էքպէ՛ր . . . Ալլա՛հ էքպէ՛ր . . .

### XIII. ԻՆՆԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Այն տարին , յիշո՞ւմ ես , սեւ տարի էր մեր  
երկրի համար : Սով , կոտորած , այլեւայլ համա-  
ճարակներ յաճախ էին սպառնում մեր ժողովրդին :

Մարդիկ , մարդկանց , առանց ծանօթ լինելու  
իրարու , կոկորդ էին սեղմում :

Պատերազմ էր . . . . .

Ազգեր էին չափուում :

Ու մենք , յաճախակի մեր խօսակցութեան ըն-  
թացքին անիծում էինք հասարակարգն այն ան-  
արդար , որ այս բոլոր երեւորյթների պատճառն էր :

Մեր դատողութիւնները հոգ չէ թէ շատ անգամ  
երազների վրայ էինք հիմնում :

Մեր պահանջներն արդար էին :

Դուն ինձ խորհուրդ էիր տալիս մեր բակում  
ապրող ուս գնդապետի կնոջ մօտ այդ բովանդա-  
կութեամբ չ'խօսիլ :

\* \* \*

Անցել են չորս երկար տարիներ այն օրից . շատ  
բան է փոխուել :

Եւ գիտեմ , որ հէնց այս բոպէիս , երբ ես հո-  
գուս ամենանուիրական անկիւնից այս յուշերը թըղ-

Թին եմ յանձնում , դուն այդ տեղ քո մանկան գըր-  
կած , ժպիտի անուշ փայլն ունիս դէմքիդ ու շըրթ-  
ներիդ վրան էլ նոր կեանքի նոր խօսքը զաւկիդ ա-  
կանջին :

\* \* \*

... Ու շատ քաղաքներ էին ամայացել , շատ  
գիւղեր մոխրացել :

Ամեն քայլափոխ պատմում էր մեզ նոր եղեռն ,  
նոր սարսափ : Յրտահար մանուկներ , բուքին մէջ  
երկունքի ցաւին հետ մինակ մնացած նորահարսեր ,  
վեհութեան սպիտակով զարդարուած ծերունի-պա-  
ռաւ գանգեր գայլակեր ...

Մեր մանուկներն անհէքեաթ մնացին . մեր ար-  
տերն անցան , մեր սարերն աներգ :

\* \* \*

Մի բնաւեր էլ մեր բակումն էր ապրում :

Երէկ էր եկել , այսօր տեսանք :

Մեր հարեւան կօշկակարի քոյրն էր :

Մի հրաշալի հայուհի էր : Հազիւ քսան տարե-  
կան էր : Հագնւում էր հայկական տարազով :

Կարմիր ու շագանակագոյն երկար գծերով մե-  
տաքսէ երեք փէշանին շատ եր սազում իրան :

Թիկունքը գրկող սեւ , բարակ մահուտից կար-  
ուած մինթանի թեւերի ծայրերն ու օձիկը շրջա-  
կարուած էին ոսկեթելով :

Մայրութեան հասած ծծերի եզերքներից բա-

Ժանուկելով սեւ մինթանի երկու ծայրերը մէջքի վըրայ, ծոպաւոր գօտու տակ միանում էին իրար:

Ծծերն ու կուրծքը գրկող, նուրբ, ասեղնագործ սպիտակ շապիկից վերեւ սկսւում էր մարմար կըզկատակն ու քիչ արեւախանձ կարասպավիզը:

Աչքերը, մազերի հետ սեւ էին: Ճերմակ առողջ դէմքին վրայ լեռնային կորովի մի բուրում կար, իսկ շարժումների մէջ գերազանցօրէն տենջահարաւէր մի նազանք:

Գլխին դրուած բարակ արծաթ թասակն ու ճակտի ոսկեշարը ծածկւում էին նուրբ սպիտակ մի քօղի տակ, որտեղից սկսւում էր երկար մազերի բազմաճիւղ հիւսերը:

Թեւերի հազիւ մնացած մերկութիւնն օղակել էին մի զոյգ ապարանջան թանգազին քարերով զարդարուած:

Կարմիր, նուրբ շրթների միջից բացուող բերանը փոքր էր. քիթն համաչափ ներդաշնակ դէմքին վրայ, իսկ ճակտի ճերմակ հարթութեան վրայ եզերուող յօնքերը քիչ թաւ էին:

Երբ դուրս էր գալիս, թէ տարազի եւ մանաւանդ գեղեցկութեան պատճառաւ շատ շատերն էին կանգնում ու դիտում:

Յիշո՞ւմ ես, մենք էինք նրան ման ածում: Ես շատ էի հպարտանում: Յեղային մի սիզութիւն ունէր նա իր կրծքում: Ու արհամարհանքի մի հայեացք իր քալուածքի մէջ այն խայտաճամուկ, բարձերով ու սեղմերաններով, սնդուրով ու շալարով գե-

դեցկացած, մայթին երկանքը բռնած կանանց վաշտերի վերաբերմամբ, որոնք նախանձի տենջով նայում ու — հայուհի է, հայուհի է, էին ասում :

Խօսում էր իրեն բարբառով, սլարդ, քիչ էլ կոպիտ, բայց շատ դուրեկան ձեւով :

Տուն եկանք արդէն :

— Նա ինձ շատ դուր է գալիս ասացիր :

— Նա կատարեալ գեղեցկուհի է ասացի ու դուն առանց մի որեւիցէ խօսքի իմ աչքերիս նայեցար ու մենք միասին ժպտեցինք :

\* \* \*

Սեղանատանն ամեն ինչ սլատրաստ, մաքուր անձեռոցիկներով ծածկուած, դրուած էր սեղանին :

Լամբը քիչ իջեցրել էին ցած :

Մատների վրայով անխօս մօտեցանք սեղանին :

Խոր լռութեան մէջ տատիդ ննջարանից ուժեղ խրմբալու ձայներ էին գալիս : Ելար, դուռը ծածկեցիր :

Քնարեր մածնէ ընթրիքից յետոյ, ես դնացի իմ սենեակս, որ երկու շաբաթ էր, որ առանձնացած էի :

Պառկեցի :

Մութ էր սենեակս. խոր լռութեան մէջ արդէն երազի առաջին էջերն էի կարդում, հերարձակ, կիսամերկ ներս ընկար :

Շրթներդ՝ շրթներս փնտռեցին ու անկողնիս  
մէջ մերկութիւնդ թեւերիդ ուժով փարուեց ինձի :

— Խօստացի՛ր, որ «նոր աղջկան» չես սիրե-  
լու, խօստացի՛ր... ասացիր հեւալով :

Հասկանում էի քեզ. գիտէիր, որ երկար խօս-  
քեր շռայլելու պէտք չունէի :

Զուսպ ուրախութեամբ այլեւս ձայն չ'հանե-  
ցիր...

Ու անմեղութիւնը քո ճերմակ թեւերիդ վրայ  
մի անգամ էլ պայծառացաւ...

\* \* \*

Առաւօտեան երբ իրար հանդիպեցինք ասացիր :

— Այս բոլորի վերջն աշխատենք վատ չ'վեր-  
ջանայ : Երէկ չափն անցկացրինք. ի՛նչ գիժ սէր է  
մեր սէրը : Մայրիկն ինձ նկատողութիւն արաւ, որ  
արդէն ուշ ենք վերադառնում : Ու երբէ՛ք չ'մտա-  
ծես. նա ինձ է մեղադրում. նա քեզ չափազանց շատ  
է սիրում...

#### XIV. ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Իմ առաջարկով այսօր օպերա դնացինք :

Եղբայրդ էլ հետերնիս էր :

«Փառաստ»ն էին ներկայացնում :

\*

Վարագոյրն իջաւ :

Սոր ազդեցութեան տակ, թեւս մտած, երկուսով առանձնացանք միջանցքի թաւշապատ, տրոպիքական բոյսերի մէջ կորած նստարաններից մէկի վրայ:

Չէինք խօսում...

Այդպէս լինել կարծես անհրաժեշտութիւն էր:

Վայրկեաններ շատ կան, որ մարդիկ ամենամեծ հաճոյքը կզգան երբ լինին իրենք իրենց հետ: Մենք այդ ժամանակ միասին չէինք կարծես:

\*  
\* \*

Ճանապարհին սովորական օրերի նման թեւս չէիր մտել:

Ես ինձ ուրախ էի զգում, որ դու գոհ էիր ներկայացումից: Հարցերդ, որ տրագեօտիային էին վերաբերում, գոհացրի:

\*  
\* \*

Մեծ հրապարակի անկիւնն, որտեղ եղբայրդ ընկերներից բաժանուած մեզ էր սպասում, թեւս մըտնելով ցածրաձայն ինձ ասաց:

— Լուսօին ձեռ եմ առնելու, սպասի:

Ու սկսեց հետդ կատակել:

Դուն չարանում էիր. աշխատում էիր սլատասխանել:

Նա լիաթոք ծիծաղում էր, որ դու այդպէս չարանում էիր:

Նորից շարունակեց :

— Էս օր էլ թեւդ չի մտել, բայց հաւատացած եղիր, որովհետեւ ես այստեղ եմ դրա համար է. վախկո՛տ. Ի՞նչ ես ամաչում, սիրելը վա՞տ է: Ա՛խ, ես էլ երանի մէկին սիրէի, կամ աւելի ճիշտը մէկը լինէր, ինձ սիրէր:

— Յիմա՛ր, քեզնի՞ց եմ ամաչելու, ահաւասիկ, ասացիր ու թեւս մտար:

Ես էլ սկսեցի ծիծաղել: Եղբայրդ առաջնիս պահեց ու ինձ ասաց:

— Բարեկամ, աշխատութեանս վարձը խընդրեմ...

— Ի՞նչ վարձ:

— Բա՛ ինչ, ե՛ս պատճառ եղայ, որ...

— Էհ, էդ յիմարին կարեւորութիւն մի տար ասացիր՝ ուրախ տրամադրութեամբ. բայց նա դրամապանակս արդէն հանել էր գրպանիցս:

\*

Փոքրիկ կրպակում պարսիկ մրգավաճառն հըրաշալի խնձորներ ունէր:

\*

— Խնձորի համար էլ դու շնորհակալութիւն յայնիր, ասաց քեզ ու խինդ ու կատակով ներս մըտանք բակը:

Մայրդ այսօր տարօրինակ կերպով այսքան ուշ մեզ էր սպասում: Նա լրագիր էր կարդում:

## XV. ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Մեր այգին սիրուն է :

Ստուերախիտ ծառեր . բուրալից ծաղկանոց .  
մի սիրուն , վարդի թփերով գրեթէ ծածկուած խո-  
սարան , որտեղ նստարան էլ կայ :

Անդորր գիշեր է :

Երկնքի կապոյտ լազուրին վրայ , պլպլում են  
բիւրաւոր աստղեր աղամանդների նման :

Մեծ լուսթիւնը գարնանային սիւզի թեւերով ,  
երբեմն խօսում է ծաղիկների , ծառերի հետ , որոնք  
հեզ աղմուկով վրդովւում են , որ իրենց սէրը աստ-  
ղերի հետ խանգարում են ու անցնում :

Ես էլ եմ գլխաբաց դուն էլ :

Թիկն եմ տուել խօսարանի ցանկապատին , դու  
էլ կողքիս :

Աջ թեւս մէջքիցդ անցրած , մատներս անցրել  
եմ մատներիդ ու ձախ ձեռքդ էլ դրել ես ձախ ձեռ-  
քիս մէջ :

Կարապի սպիտակ վիզդ թեքել ես յետ , դէմքիս ,  
որտեղ այտերիդ տաք աղուամազը չրթներիս հետ  
այն խաղն է անում , ինչ որ զեփիւռը ծառերի :

Մենք երջանիկ ենք , մենք ուրախ :

Մազերիդ սեւ ծովը ծածկել է վիզս , որոնց ա-  
նուշ բուրումը արբեցրած ինձ , քնաբեր ազդեցու-  
թիւն է թողնում :

Երկուքս էլ ինքնամոռացումը , անէացումն  
ենք ապրում :

Յիշում եմ արեւելքն իր մեծ խոկման մէջ, որ  
մշտական վայելքը փնտռեց եւ վայելքի մէջ երկնեց :

\* \* \*

Դիրքդ փոխեցիր :

Դեղին կղմինտը զլիսիս բարձ շինեցիր ու ես  
երկարեցայ նստարանին, իսկ դու կողքիս թեւե-  
րովդ թիկունքս օղակած, շրթներդ առաջացան շրթ-  
ներս, կուրծքիդ փափկութիւնն ընկաւ կրծքիս ու  
ես զգացի գարուն էութեանս մէջ ցանկութեանս  
յորդացումը :

\* \* \*

Բակի դուռը ճոնչաց իւր ծխնիի վրայ. հարեանի  
չնիկն աղմկեց, իսկ հայրդ անտարբեր, մի երգ մը-  
նըլտալով, իր դանդաղ, շորոր քայլերով ներս մը-  
տաւ :

Առաջին անգամն էր, որ նա այսպէս շուտ տուն  
էր գալիս :

Այս է պատահականութեան ոչ ցանկալի, բայց  
էապէս անհրաժեշտ բարին :

Հարկաւոր է գնալ :

## XVI. ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Այսօր կէսօրին, մայրդ հեռագիր էր ստացել,  
որ մօրաքոյրդ գալիս էր :

Երեկոյեան ժամը տասին հաւանաբար կայա-

րանում պիտի լինէր :

Մայրդ ինքը չ'կարողանալուն պատճառաւ ինձ  
ասաց :

— Ջա'ն , երեքով գնացէք կայարան . եթէ տաս-  
նի գնացքով չ'գայ , տասնուկէսի գնացքով անպայ-  
ման կգայ . սպասեցէք , հետերնիդ բերէք :

\* \* \*

Կայարանում , օրուայ միւս ժամերի նման , այն-  
քան ժողովուրդ ու ժխոր չ'կայ :

Մի քանի անգամ երեքով կայարանի քարուղու  
երկանքը գնացինք ու եկանք :

Բաւական հեռու , այլեւայլ կէտերում երեւում  
են կարմիր , կանաչ գոյնի լոյսեր :

Երբեմն , երբեմն հատ ու կէնտ պաշտօնեաներ  
իւղոտ , կաշուէ շորեր հագած , լապտերներ ձեռքեր-  
նին այս ու այն կողմն էին գնում :

Քարուղու վրայ մեզ նման ճամբորդի կամ գը-  
նացքի սպասող մարդկանց մի փոքր բազմութիւն  
կար : Այլեւայլ խօսակցութիւններ , ծիծաղ , վայրա-  
շարժի սուլոց իրար էին անցել :

Մարդիկ մերթ ներս էին մտնում , մերթ դուրս  
գալիս :

Մենք մտանք բոլոր բաժանմունքները : Երրորդ  
կարգի կասի առաջ մի ահագին պռչ կար տոմսակ  
առնողների :

Այստեղ աւելի շատ մարդիկ կային քան թէ միւս  
կարգերում : Արձակուրդ ստացող զինուորներ , գաղ-

Թականներ, կանայք, երեխաներ բռնել էին կայա-  
րանի այդ կարգի ամբողջ սրահը: Մի մասը հաւաք-  
ուած հաց էին ուտում, մի տեղ ընդհանուր բարձրա-  
ձայն խօսակցութիւն անում. մի մասը իրար հետ կա-  
տակում ծիծաղում:

Մի մասն էլ՝ ծեր ու փոքր երեխաներ պառկած  
մի բանի վրայ, անուշ խրմբացնում էին:

Քրտինքի ու կեղտի բաւական մի ծանր հոտ  
պատել էր ամբողջ սրահը:

Մանրավաճառ մի փոքր տղայ, ուտելիք զանա-  
զան բաների անուէններ էր կանչում բարձրաձայն:

Սրահի մէջտեղում վառուած, մեծ, ելեքտրական  
լամբի դեղին լոյսը, ամեն անկիւն ճառագայթել էր:

Անցանք երկրորդ կարգը:

Երեք չորս հոգի, մէջտեղում դրուած, երկար,  
թաղարներով ծանրաբեռնուած մի սեղանի առաջ  
նստած լրագիր էին կարդում:

Ռազմաբեմերից յաղթանակի նոր լուրեր կային:  
Մի ջահել, շիկահեր կին իր երկու երեխաներն ա-  
ռաջն առած, կերակուր էր կերցնում:

Մի քանի զինուորականներ ու այլ մարդիկ բու-  
ֆէտի առաջ հրաշալի կոնծում էին:

Մէկը չափն արդէն անցրել էր:

Ուզում էր բարձրաձայն երգել, բայց ընկերները  
թոյլ չէին տալիս:

Անդադար նրա անուէն էին տալիս, արգելքի  
ցուցմունքով բայց նա նոյն յամառութեամբ կըրկ-  
նում էր իր պահանջը:

— Ի՞նչպէս չի՛ կարելի... Ե՛ս դիրքերն եմ գը-  
նում... Ե՛ս դիրքերն եմ գնում... Ձեր... ու ձեռ-  
քի բաժակը փշրեց հաստ, մարմար սեղանի վրայ:

Անընդհատ բացուող ու դոցուող դրան միջից,  
գարմօնի խինդոտ, ուրախ արագաչարժ մի եղանակի  
վանկեր է գալիս:

Գազազներն են սլարում դուրսը:

— Գնա՛նք:

\*  
\* \*  
\*

Դեռեւս օրեր առաջ, մօրաքրոջ մասին, նկարն  
ալպոմում ցոյց տալով, պատմել էիր:

«Բժշկական կուրսերում ուսանողուհի է:

Արդէն երկրորդ կուրսումն է:

Մի տարի էլ հիւանդանալուն պատճառաւ կոր-  
ցըրեց: Քսան երեք տարեկան է: Սիրում է մի ուսա-  
նողի, որն այժմ պատերազմում է: Եթէ գայ, շու-  
տով կամուսնանան:

Հիմի էլ յայտնի գեղեցկուհի է, բայց առաջ ա-  
ւելի գեղեցիկ էր:

Կեանքն ապրած, հասկացած աղջիկ է: Առաջ  
սոսկալի ինքնահաւան ու հպարտ էր հիմի էլ սոս-  
կալի նեարդային է ու չար...

Ես նրան չեմ սիրում»:

Քո այս կարծիքն հոգեբանութեանս մէջ նրա  
հանդէպ ստեղծել էր մի փոքր ատելութիւն:

\* \* \*

Գնացքը շողի ու ծուխ թքնելով մթուժեան մէջ,  
ուժեղ սուլելով արագ կանգ առաւ:

Ճամբորդներն ու սպասողները մէկ իրար ան-  
ցան: Ուրախութեան, համբոյրի ձայներ, արցունքի  
ու լորձունքի հետ իրար խառնուեցին: Գոռում-  
դոչում, աղմուկ, աղաղակ:

Չանազան անուններ իրար էին փնտռում:

Ամենից առաջ դո՛ւ տեսար մօրաքրոջդ: Գոյ-  
քերն արդէն բեռնակրի տուած դուրս էր գալիս:

Նա, նախ քեզ ապա եղբօրդ համբուրեց: Սօսակ-  
ցութեան մէջ էր. այլեւայլ հարցեր էր տալիս, բայց  
դու առանց նրանց պատասխանելու ասացիր:

— Մօրաքո՛յր, ծանօթացի՛ր, լա՛ւ ընկերս...

Երկարեցի ձեռքս:

— Արծիւեան:

— Յովհաննիսեան, ասաց ու սկսեց խօսել նո-  
րից մայրիկիցդ, ազգականներից ու իրանից:

Գոյքեր շատ չունէր արդէն:

Բռնեցինք մի կառք: Դուք երկուսդ նստաք թի-  
կունքն, իսկ մենք ձեր դիմացը:

## XVII. ՏԱՍՆԵՐ ԵՔԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ապրիլ քսանը մէկն էր: Ծննդեանդ տարեդարձի  
օրը:

Բարեկամներդ, ազգականներդ, բոլորն հա-  
ւաքուել էին ձեզ մօտ:

Ստացել էիր շատ նուէրներ՝ ծաղկեփնջեր,  
թանգարժէք ոսկեղէն ու արծաթեղէն քեզ՝ աշակեր-  
տիդ վայելող իրեր:

Ուրախ էիր: Արագ ներս էիր մտնում, դուրս  
գալիս: Ներկայներին հիւրասիրում էիր սեղանին  
դարսուած խմորեղէններով, մրգերով ու անուշե-  
ղէններով:

Հագել էիր ճերմակ շորեր:

Սիրուն սանտրուած, արձակ դիսակներիդ ըստ-  
ուերներն արդէն շառագունած դէմքիդ կիսամութ  
աղուամազի մի դուրեկան թաւիչացում են տալիս:

Այդ օրուայ չարածճիուլիւնդ, ինչպէս ինձ՝  
այնպէս էլ բոլոր ներկաներին է դուր գալիս:

Պառաւ ազգականներդ, նրանց մէջ էլ մայրդ,  
մինակ քեզնից են խօսում ու քեզմով սքանչանում:

Խօսքն արդէն տասնեակ ջահել սպաների ու հա-  
րուստ վաճառականների հասաւ, որոնք արդէն ծը-  
նողներիդ առաջարկութիւն էին արել:

Քո վերաբերմամբ շռայլուած գովասանքներից  
խելակորոյս, մայրդ առանձին ուրախութեան մէջ  
էր շաղախուած:

Բայց դու չ'գիտէիր, որ այդ բովանդակու-  
թեամբ են խօսում:

Սեղանի շուրջ զանազան խօսակցութիւններ էին  
դառնում: Արդէն ամեն մէկն իր համար մի խօսակից  
ճարել էր:

Եղբայրդ, հարեւան ռուս աղջկայ դարպասան-  
քից ձանձրացած՝ սկսեց բարձրաձայն նրան հար-  
ցեր տալ:

Եւ նա ստիպուած խօսում էր սկսուած խօսակ-  
ցութեան շուրջ: Դասընկերուհիդ՝ Օլեան, որ գը-  
թութեան քրոջ պաշտօն էր կատարում ժամանակա-  
ւոր կերպով, ինձ հետ էր խօսում: Դու նրան ամեն  
ինչ պատմել էիր: Աչքերից, լեզուից ու թողած տը-  
պաւորութիւնից կարելի է եզրականցնել, որ նա  
հոգի-աղջիկ է:

Հարեւան ռուս գիմնազիստը Մարիամին հետ  
է: Մօրաքոյրդ արդէն ձեռք է գցել հօրեղբօրոր-  
դուդ՝ Գարեգինին, որ գեղեցկադէմ, առոյգ մի ըս-  
պայ է տեղակալի աստիճանով:

Սերեօժան ու Նինան, արդէն պարտէզ գնացին:  
Իսկ մեծերը թէյից անմիջապէս յետոյ սկսեցին  
թղթախաղի:

Հայրդ, Տ. Օհանեանը, մօրաքոյրդ ու Գարե-  
գինը մի սեղան գրաւեցին:

Մի ռուս պետական պաշտօնեա, հօրեղբայրդ Պ.  
Օհանեանը եւ Տ. Գալէմքէրեանն էլ մի սեղան բըռ-  
նեցին: Մի սեղան էլ կար դեռեւս պատրաստ, բայց  
միւսներն զբաղուած էին խօսակցութեամբ:

Ջահելներս սկսեցինք քիչ ծաղկախաղ խաղալ:  
Դուն շատ քիչ անգամ էիր մասնակցում: Աղախնուն  
ցուցմունքներ էիր տալիս:

Կամաց-կամաց, զոյգ-զոյգ դուրս ելանք պար-  
տէզ:

Ես Օլեաի հետ նստած խօսում էի, երբ եկար  
ու մեզ դարար :

Բաւական խօսեցինք. ջահելներն ինչի՞ մասին  
են խօսում :

— Ես ձեզ չ'խանդարեմ ասելով Օլեան հեռա-  
ցաւ : Միամտեցողիչ խօսքերդ, որ նա մ'նայ, ար-  
դիւնք չունեցաւ :

Պարտիզում, քաշկռտութի, ծիծաղի մի աղմուկ  
էր տիրում : Չ'դիտէինք ինչ էին անում : Փողոցի դը-  
րան կողքին մի նստարան կար. մենք երկուսով  
դուրս եկանք այնտեղ ու կողք-կողքի վաթթուած  
նստանք :

Ձայրացել էիր մօրդ վրան, որ թոյլ էր տուել  
նոյն բովանդակութեամբ խօսակցութեան :

Երկար խօսակցութիւնից յետոյ ասացիր. — Թա-  
մատա քեզ ենք ընտրելու. դա արդէն վճռուած բան  
է : Քիչ պիտի խմես, բայց ուղած ձեւովդ պիտի կա-  
ռավարես : Ես վստահ եմ : Տրամադրութիւնդ տե-  
ղըն է չէ՞ եւ վատանալու էլ պատճառներ չ'կայ :

\*  
\* \*  
\*

— Լուսի'կ, Լուսիկ, ա'յ Լուսի'կ :

— Մօրաքոյրդ է կանչում, գնա'նք :

\*  
\* \*  
\*

Խաղը դադարել է : Մի մասը դեռեւս վիճում է  
թղթախաղի մասին :

— Մինակ գարօի տուզն ինձ մօտ լինէր, ես տարել էի ամեն ինչ, ասեց ոռւս պաշտօնեան: Հայրդ, որ տարօրինակ կերպով այսօր տարուել էր, ծիծաղելով ասում էր.

— Հիւրերին տանենք, ի՞նչ կասեն: Կասեն մեզ թալանեց, ճանապարհ դրաւ...

— Հօրեղբայր, ձեռքիցդ դար, աւելին պիտի անէիր, բայց թուղթն երբէք չ'օգնեց: Ի դուր տեղը մի արդարանար, ասեց Գարեգինը:

\*

Սեղանատան ջահի ութ լամբերն էլ վառել էին: Առանց մի թերութեան սեղանը ծանրաբեռնուած էր անհրաժեշտ առարկաներով ու մի մաս ուտելիքներով:

Բոլորին, դո՛ւ հրամցրիր սեղանը:

Իմ սիրտս տրոփում էր:

Ամեն մարդ գրաւեց իր տեղը:

Սեղանի վրայ, երեք մեծ վագերի մէջ, իրարից հաւասար հեռաւորութեան վրայ դրուած, դարսընուած էին զանազան պտուղներ:

Նախ հայրիկդ մի մի սկահակ դօնեակ լեցնել տուեց, «Բարի դալուստ» մախթեց ու առաջարկեց ընտրել սեղանի վարիչ:

Պատառաքաղներն ու դանակներն սկսեցին գործել պանիրի ու ձկնեղէնի պնակներում:

— Մեր Գարեգինն, ասաց մօրաքոյրդ:

Մի մասն էլ ոռւս պաշտօնեան ուզեց:

Օլեան էլ ինձ առաջարկեց :

Ես հրաժարուեցի, բայց դուք ստիպեցիք :

Ռուսը նախկին գիմնազիստ լինելով, անգիր արած լատիներէն հատուածներ շատ էր յիշում :

— Vox populi, vox Dei\* , ասաց նա : Ով որ շատ ձայն ստանայ նա լինի :

Հագիւ էր խօսքը վերջացրել, երբ բոլորդ անունըս արտասանելով ձեռք բարձրացրիք :

— Միւսները քուէարկել պէտք է՛կայ ասաց . բայց երիտասարդ պարոնին բաւական ծանր բեռան տակ զցեցինք . կամ մեզ սարերն է թողնելու կամ . . . չեմ վերջացնում : Երիտա՛սարդ, կենա՛ցդ, բարով կառավարես :

Ու բոլորդ միասին ուրախ աղմուկով կենացս խմեցինք :

Ընթրիկն առանձին մատուցարաններով սկսեցին բերել :

Ես առաջին կենացը, սիրուն մի ճառով, իբրեւ օրուայ հերոսուհին, քեզ համար խմեցի :

Սկզբում արագ էի շարժւում, որպէսզի հարբեն, տրամադրութիւննին բացուի :

Հերթաբար սկսեցի խմել բոլորի կենացը : Նըլազ, երզ, բաժակաճառ, ծիծաղ, արտասանութիւն, պար, գեղեցիկ ձեւերով հիւսւում էին իրար ու ստեղծում քո խրախճանքի սեղանի զամբիւղը, որի մէջ ամենալաւ յիշատակներս եմ պահել :

---

\*Չայն բաղմաց ձայն Աստուծոյ :

Եստ խիստ էի պաշտօնիս : Ռուս պաշտօնեան  
արդէն մի քանի անգամ ընդհանուր ծիծաղի տակ  
«իբր պատիժ» սովորական ջուր խմեց : Նրա իւրա-  
քանջիւր շարժումն ու խօսքը մեզ բոլորիս թիլացնե-  
լու աստիճան ծիծաղ էր պատճառում :

Արդէն երկու ժամ էր անցել :

Ուրախութիւնը գինու կաթիլներէ հետ յորդե-  
ցաւ մեր սեղանին ու շրթունքին :

Բոլորն էլ փոխուած էին ու բոլորի տրամդրու-  
թիւնն էլ բարձր, նամանաւանդ քոնը :

Երգեցինք, պարեցինք, կերանք :

Արդէն թուլացել էին բոլորն էլ ու իմ տիրա-  
պետութեանս վախճանն էլ մօտենում էր :

Բոլոր պահանջներս կատարել էին :

Ունէի մի վերջին պահանջ :

— Սկսի թող, Սէրգէյ Իվանիչից (այսպէս էր  
ուս պաշտօնեայի անունը) դէպի աջ թող համրի  
իւրաքանչիւր մարդ երկուսն ու երրորդի հետ համ-  
բուրուելով «պրուտըր շաֆթ» խմի :

Աղջիկներից մի քանիսն ուզեցին խուսափել :

Բոլորը միաձայն երկրորդեցին իմ պահանջը :

Տեղափոխութեան աղմուկ, ծիծաղ իրար խառ-  
նուեց : Հօրեղբօրորդուդ, մի պառաւ հանդիպեց :  
Մօրաքրոջդ մի քամուած ծերուկ, ուս պաշտօն-  
եային Մարիամը, որ նրա ծիծաղի ու արգելքի տակ  
թեւիցը բռնած, չէր թողնում որ հեռանայ :

Միւս զոյգերն որոշ չափով համապատասխան  
էին :

Դու ինձ էիր հանդիպում :

Հօրեղբորորդիդ թեւիցդ բռնեց ու բերեց մօտս :  
Օլեան , Նինան , Մարիամը սկսեցին ինձ մատ թափ  
տալ :

— Այ դո՛ւ , խորա՛մանկ , ասաց Նինան :

Դու շառագունել էիր բոլորովին :

Աչքերդ կախել էիր ցած ու սպասում էիր վախ-  
ճանին :

— Համբուրուէ՛ք , համբուրուէ՛ք , ասաց հայրդ :  
Բաժակները , վերջին անգամ լինելով , մեր թե-  
ւերի միջով , դատարկուեցին :

\*  
\* \*

Երբ բոլորը գնացին , դու անսպասում ուրա-  
խութեամբ վիզս փաթաթուեցիր ու ասի՛ր .

— Շնորհքով ջան , խելօք ջան , շատ լաւն էր . . . .  
շատ լաւն էր . . . .

## XVIII. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Անցան շատ օրեր . . .

Հինգ մատի նման պարզ է արդէն բոլոր բարե-  
կամներիդ , որ մենք այլեւս իրար ենք սպասկանում :

Հայրդ ինձ գործի մէջ , կեանքում է ծանօթա-  
ցած , այնպէս որ ամենամեծ վստահութիւնն ու սէ-  
րը ունի , բայց որովհետեւ երիտասարդական հա-  
սակում շատ արկածներ է ունեցած շնորհիւ իւր

հարստութեան ու գեղեցկութեան, բնական ու անհրաժեշտ հետեւողութեամբ մօրդ ասել էր:

— . . . . . Այնուամենայնիւ ուշադրութիւն դարձրու, ջահելներ են . . .

\*  
\* \*

Այդ առթիւ մայրդ քեզ համար մի երկար խորատական ճառ էր կարդացել:

Մօրաքոյրդ էլ առանձին եռանդով ու հողատարութեամբ պաշտպանել էր նրան:

Դու այդ առթիւ շատ էիր զայրացել ու ասել.

— Խնդրե՛մ, ամեն մարդ թող ի՛ր հաշիւը պահի. Օրդ. Յովհաննիսեանը թո՛ղ լռի ամենից առաջ, որովհետեւ իր անցեալն ու ներկան երբէք խորատատուի իրաւունք չեն տար:

Մօրդ վերջին խօսքն այս էր եղել:

— Հինգ ամիս է այդ տղան մեր տանն է: Մի օր ես նրա վատ արարքը չ'տեսայ. դիտունի է, խելօք է. բոլորս էլ գոհ ենք իրանից, բայց արդէն ամեն մարդ խօսում է. մի քիչ պիտի վերջ տաք . . .

\*  
\* \*

Եղբօրդ հետ նոր տուն եկանք:

Երեք հատ թաղարների մէջ պահուած սիրուն վարդենիներ գնեցինք շուկայից:

Դուն շատ տխուր էիր. դէմքդ բոլորովին այլայլ-

ուած էր: Ոտքերդ հանած, քո առանձնասենեակում, ընկել էիր մահճիդ:

Ես գնացի ձեռքերս լուալու:

Եղբայրդ սկսեց բարձրաձայն կատակել քեզ հետ:

— Նորից Լուսօի առաջից խատ կատու է անցել:

Դու բարկացար ու նեարդայնացած դրութեամբ ասացիր:

— Կո՛րսուիր մօտիցս:

— Բա՛, բա՛, բա՛. ինչքա՞ն է թթուել թթուն մամա, քացախը շատ ես լեցրել:

Դու ուղեցիր հողաթափդ նետել նրա յետեւից, բայց նա արդէն դուրս էր ցատկել:

Ես լուացարանից տեսնում ու լսում էի այս բոլորը:

Ճաշը պատրաստ էր:

\*

Մենք ճաշել վերջացրել էինք, որ դուն եկար:

— Տե՛ղ բաց արէք թաղուհուն: Այնքան է փրփուել, որ դժուար թէ տեղաւորուի, ասաց նորից եղբայրդ:

— Աչքերդ առանձին բարկութեամբ մէկ նրա կողմը դարձան ու սկսեցիր բողոքել մօրդ, որ Լուեցնի նրան:

— Քեզ տանողն ինչպէս պիտի քո դարտը քաշի. վայ քեզ տանողին ասաց մայրդ:

Ես դէմքս դարձրած ժպտում էի:

Տեսար դուն ու սկսեցիր ծիծաղել մօրդ հետ :  
— Փա՛ռք քեզ Աստուած , այսօր շարաթ է , ա-  
սաց եղբայրդ : Երեկոյեան մի մոմ եմ վառելու :

\* \* \*

Այս բոլորի մասին ճաշից յետոյ մենք միասին  
խօսեցինք . . .

— Խանդոտ զգուելու գործն է . նա ի՛նչն է գի-  
տե՞ս . . . ասացիր :

— Գնանք վերջացնենք «վիկտորիա»ն :

\* \* \*

Լրացրինք . դու լացիր : Ես քեզ մի անգամ էի  
տեսել լաց լինելիս . . .

Ես շոյեցի քո սիրուն մազերն ու դուն գլուխդ  
դրիր գիրկս քնելու . . .

## XIX. ԲԱԺԱՆՈՒՄ

Այսօր , ես քեզ ձերոնց հետ ճանապարհ դրի Սեւ  
Մովի ավիին գտնուող ամառանոցներից մէկը . . . . .

.....  
.....  
.....  
.....

## XX. ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Փոքր եղբայրդ, որ մօտակայ քաղաքի գիշերօթիկ դպրոցումն էր, եկաւ այսօր:

Նա երեկոյեան գնացքով մեկնելու է ձեզ մօտ:

\*

Ո՛չ մի ժամանակ ինձ այսպէս մենակ չէի ըզգացել, ինչպէս այսօր:

Հոգիս անթաց աչքով լաց է լինում:

Սիրտս, կարծես մի քանի կոպիտ ձեռներ առել են իրենց մէջ ու ճմլում են:

Ուզում եմ լաց լինել, բայց չեմ կարողանում:

Եւ ես ասրեցի նաեւ լաց լինել չ'կարողանալու տանջանքը:

Առաջին պահ, չ'նայած երբէք չէի կարողանում մտքիցս հանել քեզ, զբաղուած էի սենեակս կարգի բերելով:

Եւ նոր տանտիրուհիս ստիպուած էր իմ մէն մի կարգադրութիւնս կատարել: Նա երեւի զարմանում էր իմ անսովոր բնաւորութեան վրայ:

Եղբայրդ մեզ օգնում էր:

Այնուամենայնիւ դա էլ վերջացաւ:

— Ես գնամ, կամաց-կամաց ժամանակը մօտենում է, ասաց եղբայրդ:

Ես չէի թողնում:

Այն թւումը, այն անըջային ասպրումը, թէ դու դեռեւս ինձ մօտ ես, քանդւում, չքանում էր եղբօրդ հեռանալովը: Ես անքուն ուզում էի երազել դեռ-

եւս անմեղ հոգուդ բարձունքը, վեհ տառապանքիդ (որ նոր ծնւեց) անբժութիւնը եւ ձուլուել, անէանալ նրա մէջ:

Ես տեսնում էի դեռ, թէ ի՞նչպէս ես լաց լինում ու մայրդ ինչպէս է համոզում . . .

Բաւական ժամանակ անցել էր:

— Բան ո՞ւնիս ասելիք, ես դնամ, ասաց նորից եղբայրդ:

Անմիջապէս չ'կարողացայ սլատասխանել:

Ուզեցի յանձնարարութիւն անել, հոգու յանձնարարութիւն. խօսքեր ասել, մի բան ասել, մի բան՝ որ արտայայտէր հոգիս լիովին, բայց չ'կարողացայ:

Հինգ րոպէ վերջ սլատասխանեցի:

— Գնա՛ դառնուկ ջան եւ շա՛տ բարեւիր ու համբուրեցի նրան:

\*\*\*

Սենեակս դատարկ է բոլորովին:

Օրը բոլորովին տարաժամեց: Վերջալոյսի կարմիրով օծանուտ սենեակիս ստուերները սեւցան ու ես ընկայ անկողնիս, կապոյտը դիտելու, կապոյտին ձուլուելու:

\*

— Վե՛ր կաց տղաս, պատուհանն էլ բաց ես թողել՝ ու քնել, մի՞թէ չ'մըսար, ասաց տանտիրուհիս մայրական անուշ գորովանքով եւ ձեռքի մեծ,

կապոյտ լուսամփոփով լամբը դրաւ կլոր, փոքր սեղանի վրայ:

Վեր կացայ, աչքերս սրբեցի մի ըսպէ, պատուհանը փակեցի:

Նայեցի, երեք ժամ էր անցել...

Բոլոր մարդկանց, եթէ ուտելու հաց ունին, ընթրելու ժամն է: Հարեւան սենեակներէից պատանաքաղի ու պնակի ձայներ են դալիս:

Տանտիրուհիս հրաւիրեց ընթրիկի, բայց ուտել երբէք չեմ ուզում: Չ'նայած ոչինչ չեմ կերել ու քաղցած եմ:

Տանտիրուհուս երկար, գուրգուրոտ պնդումին կարողացայ մի կերպ պատասխանել եւ համոզել, որ ո'չ հիւանդ եմ եւ ո'չ էլ քաղցած:

\*

Ուզեցի մի ըսպէ իմ էութիւնից դուրս ասլրել:  
Ի'մ մասին, ինչպէս նաեւ քո' մասին հեռուից խօսիլ, բայց չ'յաջողեցայ...

\*\*

Հոգիս՝ խոհերով, սիրտս լեցուն կարօտով, տանրդ դռները, բաղխեց:

— Բարե՛ւ անո՛ւշ ջան, բա՛րեւ հոգուս հոգին...

## XXI. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Ամբողջ օրն, անունդ հոգուս շրթունքին էր:

Սքե՛ն բան քեզնից էր խօսում:

Առաջս դրուած էր մի թերթ սպիտակ թուղթ :  
Անունդ գրեցի հազարումի ձեւերով այնքան , մին-  
չեւ որ թղթի վրայ դատարկ տարածութիւն չ'մնաց :

\* \* \*

Ճիշտ հինգ օր առաջ , մօրաքրոջդ մեկնման յա-  
ջորդ օրը , երբ դու գնացիր Օլեաի հետ քեզ համար  
նոր գլխարկ առնելու , մայրդ ինձ մօտեցաւ ու ան-  
կապ , նիւթին չ'վերաբերող նախաբան-խօսակցու-  
թիւնից յետոյ , խօսք բաց արաւ մեր յարաբերու-  
թեան մասին :

Երկար խօսեց . եւ մինակ ինքն էր խօսում . ես  
քիչ այլայլուած էի :

Նա , չ'գիտեմ ինչի , ուզում էր , որ ես անպայ-  
ման ձերոնց հետ ամառանոց գամ , բայց յիշում ես ,  
այդ առթիւ մենք երկուսս խորհած ու միասին վրձ-  
ուած էինք :

Քեզ համար պարզ էր , որ ես ո'չ մի դէպքում  
չէի կարող գալ ամառանոց :

Յայտնեցի նոյնը մօրդ :

Նա նոյնպէս համոզուեց :

Նամակներ գրելու եւ ուրիշ մի քանի խօստում-  
ներ առնելուց յետոյ , մօրդ վճիռ-եզրակացութիւնն  
այս եղաւ . — . . . Ինչպէս ասում ես , եթէ Աստուած  
կամենայ , դու այս տարի կը վերջացնես , կգաս , կ'ա-  
մուսնանաք , եւ միասին կ'գնաք շարունակելու :  
Ես երբէք դէմ չեմ որդի , երկուսդ էլ օրհնուիք : Ես

փառք եմ տալիս Աստուծոյ . ուրախ եմ , շատ ուրախ . արդէն սրանից յետոյ մենք ձեզմով ենք ուրախանալու : Աստուած երջանկացնէ . թշնամու չար աչքի չ'հանդիպիք : Ու այս երկար օրհնէնքը տալուց յետոյ անկեղծ գորովով ու լրջութեամբ , աչքերս համբուրեց :

Ես շատ էի ազդուել : Սիրտս կրծքիս տակ մի անսովոր շարժումով ուռում էր : Ուզեցի շուտ առանձնանալ , որպէսզի մայրդ չ'տեսնէր , արդէն արտասուակալ աչքերս :

\*

Քիչ վերջ դու եկար . մենակ էիր :

Գնացիր սենեակդ , նոր հագուստներդ հագար ու դուրս եկար :

Դեղին , ընկոյզափայտից շինուած կլոր պահարանի միջից հանեցիր նոր առած գլխարկդ ու ըտտապեցիր դահլիճ , մեծ , մարդահասակի հայելու առաջ :

Հրաշալի էր . ես էլ մօտդ էի :

Դու ձեռքդ վզիս անցրիր , ես էլ մէջքիդ ու կանգնեցինք հայելու առաջ :

— Գլխարկդ քեզ է վայլում , դուն էլ ինձ , ասացի . ծիծաղեցինք բարձրաձայն :

— Դու էլ ինձ , ասացիր անմիջապէս ու փաթաթուեցինք իրար :

Յառաջացանք գորգապատ թախթը ու պատին կրթնցրած բարձերի փափկութեան թիկ տուինք ու

Ես պատմեցի քեզ մօրդ ասածը բառ առ բառ :

Դու լրջացար, ինչպէս նաեւ ես, ու տխուր խոհականութեամբ ասացիր .

— Ի՞նչպէս պիտի հաշտուինք իսկապէս այս քաժանման հետ : Մի տարի, ի՞նչքան ո՛ւշ է . . .

\* \* \*

Այսօր երեք օր է, որ բաժանուած ենք :

Գիտե՞ս թէ, ինչպէս անցաւ այդ օրերը . . .

Իսկապէս, ի՞նչպէս հաշտուել այս երեւոյթի հետ . . .

## XXII. ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Անո՛ւշ աղջիկ .

Այսօր առաւօտ ծաղիկներ, թարմ ծաղիկներ նուէր ստացայ ես իմ բարեկամից :

Փնտռեցի Եղբւանին, որ դարնան առաջին օրերի հետ ինձ տուիր, կը յիշե՞ս, չ՛գտայ :

Ուզեցի ծաղիկներիս (ստացած բարեկամիցս), քո ծաղիկիդ, «իմ ծաղիկ»իս մէջ մի յարաբերութիւն գտնել, բայց չ՛յաջողեցի : Ո՛չ քո ծաղիկը կար, ո՛չ էլ իմ «ծաղիկ»ը :

Մինակ ծաղիկներ կային . . . բարեկամիցս նըւիրուած : Իրերն արժէք են ստանում իրանց միջավայրով, իրանց ենթակայով : Ես չէի ուզում, որ ծաղիկներս անիմաստ լինէին, իմ մենութեանս բարեկամները :

Նայում էի նրանց :

Ձիւնալանջ շուշանից ես անմեղ ժպիտներ ըստասեցի, քո դէմքի նման—չ'ունէր :

Կապոյտ մանիշակից ես հոգուդ խորութիւնը ուզեցի չափել—չէր երեւում :

Բազմաթերթ յափրուկներից, բազմերանդ խոյանքներիդ ուզեցի կարդալ,—թոռոմած էին :

Ժպտուն մեխակի կարմիր թեւերին ուզեցի տեսնել ձգտումներիդ վեհութիւնը—տեսայ, որ մի որդանդթարար ծծում էր հիւթը մեխակի :

Ճակատս մօտեցրի. չէի զգում, որ լաց էի լինում, ինձ հետ էլ ծաղկեփունջը բարեկամիս, որ թափանցել էր հոգուս խորքը, հասկացել ինձ ու թէ' իր բաղդին ե'ւ թէ իմ բաղդիս վրայ էր լաց լինում :

### XXIII. ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ՅԵՏՈՅ

Երկու ամիս էր անցել եւ ես կամաց-կամաց հաշտուում էի իրողութեան հետ :

Առաջին օրերն, որ անգամ հաց չէի կարողանում ուտել, չէի կարողանում քնել, այժմ փոխուել եմ :

.. Այնուամենայնիւ առանց յուզմունքի չեմ կարողանում յիշել քեզ եւ այն պահերն երազ, որ եկան դարուն կեաքիս հէքեաթն ոսկեզօծեցին :

Ամեն օր դրեթէ ստանում էի նամակներդ. եւ նրանց ընթերցումն ինձ համար հոգեկան անժխտելի

անհրաժեշտութիւն էր : Մայրդ նոյնպէս , շաբաթը մի  
անգամ գրում էր :

Նա մշտական քեզնից էր դանդաւտում , թէ «ար-  
դէն չափազանց նեարդային է դարձել , ինչ որ ասում  
ենք բարկանում է . քիչ է ուտում , դբօսնելու չի գը-  
նում եւ մշտական ընթերցանութեամբ է պարա-  
պում» :

\* \* \*

Երկու օր յետոյ պիտի մեկնիմ :

Պատրաստութիւններ եմ տեսնում :

Դասաւորում եմ գոյքերս , որոնց բոլորի վրան էլ  
քո անուշ յիշատակը՝ քո անուներ , քո ձեռքով գըր-  
ուած , կա'յ :

Սենեակիս լռութեան մէջ պատի ժամացոյցի  
ձայնն է լսում միայն : Եւ ես քեզ հետ եմ , նո'րից  
միայնակ . . .

\* \* \*

Առաւօտեան քեզնից նամակ ստացայ : Դու գը-  
րում ես « . . . . .  
. . . . .  
. . . . .

Գրել ես , թէ «չուտով դնալու եմ» : Գնա' ջան ,  
Աստուած քեզ հետ : Բաղդ եւ երջանկութիւն եմ ցան-  
կանում քեզ հեռուներում : Գնա' , բայց մի մոռանար ,  
որ Զ . ի սեպ լեռների մէջ , մի բաբախող սիրտ քո թո-  
ղած յուշերով է ապրում եւ քեզ համար աղօթում :

Մի՛ մոռնար խօսքդ : Ես գրում եմ քիչ , դու շատ հաս-  
կացիր : Կարօտի վերջին համբոյրներով քո՝

ԼՈՒՍԻԿ

## XXIV. ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօր հասայ դպրոց : Ընկերներիս մի մասն եկել  
էր արդէն :

Միւսներն էլ կամաց կամաց դալիս էին : Ամեն  
քայլափոխիս հանդիպում էի այլեւայլ դասարաննե-  
րի ծանօթ տղաների :

Մաքո՛ւր , անկեղծ զգացումով ողջագուրում  
էինք :

Ինչքա՛ն քաղցր է , ինչքան անո՛ւշ :

Նորից հսկայ բակը եռուզեռի մէջ է :

Չանազան խաղեր են խաղում տղաները : Մի  
մասն էլ , հիւսիսային դրան ստուերում նստած խօ-  
սում , վիճում են զանազան հարցերի շուրջ :

Մի տարուայ ընթացքում ինչպի՛սի փոփոխու-  
թիւններ . . .

Շատերն այնքան են մեծացել , որ բոլորովին ան-  
ճանաչելի են դարձել :

Գիւղացի ընկերներս առոյգ , առողջ , արեւա-  
խանձ ճակատով , իրենց վրայից արեւի ու ծաղկի հոտ  
է դալիս :

Ես ինձ շա՛տ , շա՛տ երջանիկ եմ զգում ընկերնե-  
րիս շրջանում :

— Գիտե՞ս , ի՛նչքան հրաշալի բան է բոլոր ըն-

կերների կողմից (քիչ բացառութեամբ) սիրուիլ :  
Ուսուցիչներս էլ լաւ էին . Չ'նայած , պատմել եմ  
քեզ , յիշո՞ւմ ես , մի քանիսի հետ ծանրակշիռ վէճեր  
եմ ունեցած :

Առաջին օրերն անցան այսպէս հրաշալի գեղեց-  
կութեամբ :

Սկսուեցին դասերը :

Լծուեցինք աշխատանքի , բայց ես չ'կարողացայ  
նորմալ աշխատանքներ կատարել սովորական տարի-  
ների նման : Դա արդէն նկատուել էր թէ՛ ուսուցիչ-  
ներիցս եւ թէ՛ ընկերներիցս :

Շատերը գիտէին , որ օրուայ մեծ մասը կամ նա-  
մակ գրելով եմ զբաղուած կամ բանաստեղծութիւն-  
ներ գրելով :

— Անո՞ւշ աղջիկ , սէրդ ինձ բանաստեղծ էր  
դարձրել :

Չ'գիտեմ ո՞ւր են նրանք հիմի . թւում է թէ , ե-  
թէ նրանք այնքան արժէքաւոր բաներ էլ չէին , ա-  
նարժէք էլ չէին , որովհետեւ այդ ամենը գրած էի  
արիւնովս , հոգիովս :

\*

Մտերիմ ուսուցչիս մէկը , մի օր կանչեց ինձ ու  
առանձին խօսեց :

— Արծիւեան , դու այս տարի բաւական փոխուած  
ես . դասարանում նստած տեղդ շատ անգամ ուշադ-  
րութիւնդ ուրիշ տեղ է լինում : Դու քիչ էլ մեղամաղ-  
ձոտ ես դարձել— իմացի՛ր , որ այս տարի վերջացնե-

լու ես : Դու խելօք տղայ էիր : Այս ձեւի վերաբերմունքը քեզ կը դժբաղդացնէ : Պէ՛տք է աշխատիս :

Առաջին անգամ էր , որ մէկն ինձ երազից արթնացնում էր :

Արցունքների վերջաբանով ես կարդացի հոգուս պատմութիւնն իմ սիրելի ուսուցչիս :

Նա ինձ համոզեց . խրախուսեց աւելի : Աշխատում էր , որ ես մշտական դաս պատասխանէի կամ սեմինարական աշխատանք կատարէի :

Ես ստիպուած փոխուած էի : Եւ այսպէս տարին անցաւ ու ես լաւ կերպով վերջացրի :

— Յիշո՞ւմ ես , այդ առթիւ ես քեզ հեռագրեցի : ու դու նոյնպէս հեռագրով շնորհաւորեցիր :

## XXV. ՆՈՐ ՈՒՂԻ

Յիշում եմ . մեր պատմութեան մի դասի ժամանակ , (գեղեցիկ ժամերից մէկն էր դա) ուսուցչիչս ասաց «.....

.....

— Տղերք ջան , մենք մեր խօսքը դեռ չե՛նք ասած մարդկութեան ու պատմութեան եւ չեն թողուցած , որ ասենք : Եւ դուք տեսաք այդ մեր պատմութեան ընթացքում » :

\*\*\*

Ճի՛շտ էր . մեր խօսքը , մեր սէրը կհասատ էր մնա-

ցած : Աստղերին նայող մեր աչքերն արցունքով էին  
կուրցած , մեր մուրճերը փոխան գեղեցկութեան ար-  
ձանի , մինակ մեզ համար ստրկութեան շղթաներ  
էին կռած :

\* \* \*

Ու հանգամանքներն եկան , ցեղիս գոյութեան  
ընթացքի նոր ճանապարհներ ցոյց տուին : Այդ ճա-  
նապարհը շատ էր տաժանքոտ , շատ էր դժուարին :

Եւ մենք մենակ էինք . մեն մենակ , մեր մեծ ճա-  
նապարհին , մեր մեծ վշտի ու երազի հետ :

Պէտք էր քայլել մինչեւ կարմիր վաղորդայնը . . .  
Բզկտուած հայրենիքի վերաբերմամբ մարդու պար-  
տականութիւններ ունէի :

\* \* \*

«Պատմութեան էջերը շատ անգամ են մեր արիւ-  
նով գրուել , թող մեր նահատակուած սիրունն էլ  
խառնուէր հազար հազարների հետ : Ի՞նչ անէինք :

Երբ մի ժողովուրդ ամբողջովին մորթւում էր իր  
ծնուած ու դեռեւս չը ծնուած տաղանդներով , ես  
ոճիրների մեծագոյնն համարեցի այդ ժամանակ դալ  
ու նրանց արիւնոտ ու խանձուած դանգերին ի տես  
սէրս ծնկերիդ օրօրել : Դա , հեզնանք կը լինէր դա-  
ղափարի : Դա , դասալքութեան ստորնագոյնը կը լի-  
նէր :

Ես գիտէի , որ դու այս ուղղութեամբ ինձ հետ  
համաձայն կը լինէիր :

Չէ՞ որ հոգիդ թթիամորն ինձնից առաւ : Եւ չէ՞  
որ քո սէրն եղաւ նաեւ իմ իտէալիս ամենապինդ ջիւը :

Դէ՛հ , չեմ ուզում այլեւս երկար ու փայլուն  
խօսքեր ասել :

Մնաս բարո՛ւ , մնաս բարո՛ւ . եթէ ողջ մնացի ,  
ց'տեսութիւն մեր նոր կեանքի շէմքին :

Համբոյրներս քո անուշ աչքերին» :

Արծիւեան

## XXVI. ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ

Ու ես տեսայ մեծ ոգորումներն ու տառապանքը  
մի մենաւոր , վիրաւոր արծւի :

\* \* \*

Այն դպրոցական , միամիտ , գրքից խօսող տղան  
փոխուած էր արդէն :

Չ'պիտի ճանաչէիր երբէք . զէն ու գրահի մէջ ,  
դիրքում , առիւծի նման բաշը քամուն տուած , արե-  
ւախանձ ճակատով , վտանգի հետ մահի դէմ , մահն  
արհամարհած :

Շատեր տեսայ , որ ընկան : Եւ ընկնում էին ան-  
խօս , կամ անդամ մահուան մահճի մէջ աչքերնին  
գեղեցկին ու վսեմին յառած :

Նրանք մեծ մասամբ ջահելներ էին , գարուն  
կեանքով , թարմ , պայծառ-արեւ տղաներ : Ու վեր-  
ջալոյսի կարմրութիւնն իրենց արեան մէջ էին տես-  
նում :

Տեսնում էի խաղաղ կեանքի ոստաններ՝ աւերակ, մոխրացած արդէն: Գեղարուեստական կոթողներ քար ու քանդ՝ որ դարերի քրտինքով ու դարերի փոշիով են շաղուել իրենց շաղախը:

Տեսայ մանուկներ, ծծկեր մանուկներ դայլակեր. ու գեղեցկագոյն մի կին՝ տիեզերքի վերջին խօսքը, ծծից սպանուած...

Եւ ես շատ դէպքերում, յաղթանակների ամենամեծ, կենսօրօր հպարտանքի մէջ անգամ, ինձ ու ինձ, կամ քեզ հետ լաց էի լինում, թէ — ինչի՞ ինչի՞ վերջապէս այս բոլորը...

Ու այդ յաղթանակներն այնպէս էին նսեմանում, այնպէս էին խեղճանում, որ ես էլ ինձ զգալով չափազանց նսեմ ու խեղճ ուղեցի մի քանի անգամ, կողքիս կախուած ատրճանակով պայթեցնել, պայթեցրնել այն գանգն, որ այնքան ոճիրներ էր նիւթում, այնքան մտքեր էր երկնում...

Ու այդ պահերին դուն էիր գալիս առաջս եւ յիշում էի ձեր բակի անիծեալ ջրհորը...

Եւ ո՞վ պիտի հասկանար, թէ ինչի համար է այդ բոլորը: Եւ չէ՞ որ այնքան աշխատանքս ես արիւնիս մէջ ամենավատթար ձեւով էի խեղդում ու վատի անուն ստանում:

Անո՛ւշ աղջիկ, ես տեսնում էի քո անուշ ժպիտը ու կարօտաբաղձ հայեացքդ, որ մեկնմանդ օրը հոգուս դամեցիր:

Ու ես ապրեցի... ապրեցի գիշերներն այն հէքեաթ, որոնք անըջական սափորներ, աստուածաշա-

դախ խեցիով, հոգուդ նեկտարով լեցուցիր :

\* \* \*

Ու երբ ես վերադարձայ, արդէն չորս տարի էր անցել եւ դու քո այդ հեռաւոր անկիւնումդ յաղթանակներիս պատմութեան հետ, փոխանակ ծանր վիրաւորի, մահուան լուրս էիր առել ու երկու տարի յետոյ կտրուած, ու անտեղեակ ինձնից, բարեկամներիդ ստիպումով ամուսնացել էիր մի բժշկի հետ : Իմացայ նաեւ որ օրօրոցիդ վերեւ զաւկիդ ականջին սեւ օրդ ես լալիս . . .

## XXVII. ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ողջ լինելուս ու զաւուս լուրը քեզ ուշաթափել էր :

\*

Ուզեցի քեզ անպայման տեսնել : Առաջին օրն իսկ, հասցէդ առի ու եկայ տանդ դուռը թակելու . . .

Մի սպասուհի առաջնորդեց ինձ հիւրասենակ :

Շատ էի փոխուած, բայց դու ճանաչեցիր :

Օրօրոցում երեխադ լաց էր լինում, բայց դու փաթթուեցիր ինձ ու լացինք միասին . . .

Այդ ըրպէին ես անխօս, շա՛տ, շա՛տ խղճացի քո ամուսնուն :

Դուն բռնորովին փոխուած էիր : Եղնիկի խոշոր

աչքերդ վշտի ծով լինէին կարծես :

Մայրացումդ դէմքիդ ու հոգուդ վրայ դրել էր մի նուրբ ազնւութիւն . ա՛յնքան դուրեկան , այնքան անո՛ւշ . . .

Ու դուն դեռ լաց էիր լինում թախտի վրայ , կողքիս նստած :

Սպասուհին արդէն հանդարտեցրեց երեխային , այնպէս , որ ո՛չ մի ձայն չի լսւում հսկայ դահլիճում :

Նայում ենք իրար ու դուն փղձկում ես :

— Խօսիր ջա՛ն , ասացիր . . .

Ի՞նչ խօսէինք . ի՞նչ կարելի էր խօսել . . .

\* \* \*

Քիչ յետոյ ես մեկնեցի :

Երբ դուն հասցէս ուզեցիր , ես , մի սխալ հասցէ տուի , որ ինձ երբէ՛ք , երբէք չ՛գտնես այլեւս :

Ես չէի կարող հոգուս ծանրացած սոսկալի տանջանքը խղճիս էլ բռնալ :

Հոգիդ ինձ հետ , իմն էր յաւիտեան , պէտք չը զգացի ունենալ նաեւ մարմինդ . նամանաւանդ որ ասացիր՝ «Բժիշկը լաւ մարդ է . եւ ամենից սոսկալին այն է , որ հէնց այդպէս է . ի՛նչ անել , ի՞նչպէս անել . . . ի՞նչ է այս , ի՞նչ . . . ի՞նչ . . .

Ես քեզ համոզեցի . . . հեռացայ մօտիցդ , յաջորդօրն էլ այդ քաղաքից , որ իրար երբէ՛ք , երբէք չ՛հանդիպենք :

XXVIII. ՔՈ ՎԵՐՁԻՆ ՆԱՄԱԿԸ

Երկու տարի ես քեզնից ո՛չ մի լուր չառի: Եւ այդքան ժամանակուայ ընթացքում, որտեղ երազ փնտռեցի, այնտեղ մարմին գտայ, անո՛ւչ աղջիկ, իմ երազ օրերուս, երա՛զ աղջիկ...

\* \* \*

Մի մեծ ճակատամարտի նախօրեակին էր:

Վաղը բաղդորոչ մարտ էր մղուելու: Առաջին զիրքերից հեռու, վրանի առաջ ընկեր գնդապետիս հետ շախմաթ էի խաղում:

Կէս օրին փօստ պիտի գար:

Երկու տարի էր, որ ես ոչ մի տեղից նամակ չէի առնում եւ ո՛չ ոք էլ տեղս չ'գիտէր, որ նամակ գրէր, այնպէս որ չէի էլ սպասում:

Յանկարծ, քո գրած հասցէդ գծուած, ապա մատիտով ու ամենից յետոյ կարմիր թանաքով գրուած, ճանապարհին ձեռքից ձեռք անցնելուց՝ կեղտոտուած ծրարով ի զարմանս ինձ, մի նամակ յանձնեցին իմ կեղծ անուանս:

Բաց արի կարդալու... Արցունքներիցդ, նամակն ամբողջովին ներկուած էր:

«Նորից մի կարօտ, սիրոյ մի թախիժ՝  
 ծանօթ մեղեդին երազ անցեալի,  
 պարուրեց հոգիս»:

«Անո՛ւշ տղայ:

Դու ինձ այցի եկար դարնան առաջին ծաղիկնե-  
 րի հետ...

Ես սիրեցի քեզ...

Մենք իրար երբէ՛ք, երբէ՛ք չենք մոռանայ: Երբ  
 տեսնես սպիտակ եւ կարմիր վարդերը միասին, յի-  
 շիր մեր անբիծ ու անկեղծ սէրը եւ մի՛ մոռանայ ինձ:

Լուռ գիշերին, ծովի ափին, երբ սքանչանաս  
 ծովի եւ երկնքի անհունով, յիշիր այն անհուն ըո-  
 պէներն, որ միասին ացկացրինք... եւ մի՛ մոռանայ  
 ինձ:

Եթէ եղաւ մէկն, որ հոգիդ կարողացար նուիրել  
 նրան, մի փոքր խորշ պահիր թող այնտեղ ապրեմ  
 յաւիտեան եւ գուրգուրուեմ քեզանից:

Չ'գիտեմ նամակս քեզ հասնելու է, թէ չէ: Շատ  
 նամակներ եմ գրել... Դու չէիր ուզել տալ իսկական  
 հասցէդ...

... Մենք իրար երբէք չենք մոռանայ: Այն ինչ  
 որ մոխիր էր դարձել երեք տարուայ ընթացքում՝  
 ես քրքրեցի այսօր իմ ձեռքով: Մոխիրների տակ  
 թափնուած կայծերը ճարճատեցին, բարձրացան...

Հրդեհն հանգչում էր մոխիրների տակ, այսօր  
 նորից բռնկուեց յանկարծ...

Պէտք է հանգցնել... ի՞նչպէս հանգցնել, որ նա  
էլ չ'բռնկի, ի՞նչպէս մոռանալ, ի՞նչպէս չ'յիշել...

Ասում են թեւիդ տակը բանականեր ունես. տե՛ս  
խելօք ջան, անգուլթ բաներ չ'կատարես: Այն տունն,  
որտեղից ելած ես, այն չոր տրեխները, որ երբեմն էլ  
քո ոտքերդ են սեղմած, երբէք չ'մոռանաս:

Չէ որ դարեր ամբողջ ճշմարտութեան, արդար-  
ութեան ու ազատութեան համար մեր տրեխաւորը  
արիւն թափեց, եւ չէ՞ որ այդ տրեխաւորի անցեալ ու  
ներկայ վեհութիւնն ինձ դո՛ւ ծանօթացրիր քո խօս-  
քով, քո նամականերով:

Դէ՛հ, արեւ դադարաւորդ թո՛ղ հոգուդ ջերմու-  
թիւնը լինի եւ արդարամտութիւնդ գործիդ խարիս-  
խը:

Եթէ ինձ սիրում ես իրականացրու քո վեհ ճրգ-  
տումներդ, ես անմահ կը լինիմ: Յաջողութի՛ւն,  
յաջողութի՛ւն... Երբ նոր մարդկուքիւնը իր կեան-  
քի նոր արեալոյսը կը դիտի ձեր յիշատակների կո-  
թողների վրայից, իմ հոգին իրան հպարտ ու մխի-  
թարուած պիտի զգայ, որովհետեւ այնտեղ պիտի  
տեսնի իւր նահատակուած սիրոյ կարմիր արիւնը:

Այն ժամանակ թո՛ղ իմանան մարդիկ, որ աշ-  
խարհում մի սէր էլ այսպէս է վերջացել:

Միակ եւ վերջին համբոյրս՝ X....

Յ. Գ. Ես ապրում եմ միայն քո փառքի ու այն  
փոքրիկ, անմեղ մանկան համար: Ների՛ր, ես այլ-  
եւս իմ մասին ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ գրելու: ՆՈՅՆ



# ՀԵԹԱՆՈՍ ԱՂԶԻԿ

(1919 — 1920)



## I

## ԼՃԱՓ ԳՆԱՆՔ

Ա. Միրումեանին

Գարունն եկաւ, գարուն-աղջիկ: Վարդերը բաց-  
 ուել են շրթներիդ կարմրութեամբ. շուշանները ժրպ-  
 տում են իրանց ճերմակին մէջ, ինչպէս բոպիկ ոտ-  
 քերդ մահճիս մօտ:

— Վե՛ր կաց, հողաթափդ հագի՛ր, դուրս ելլենք:

\* \* \*

Թարմ օդն զգլխիչ ազդեցութիւն է ունենում թո-  
 քերիս համար:

Օդում, ծաղիկների բուրմունքի ու երազ-խոր-  
 հըրդի մի համադրութիւն կայ, որ թափանցում է  
 զգայարանքիս ու հոգուս:

Զգում եմ միջոցն, զգացումիդ լռութեան մէջ:

\*

Հրաշալի՛ է աշխարհը, այս գիշերը...

Եւ այդ բոլորը կարծես դիտմամբ քեզ համար են ստեղծուած, միա՛յն քեզ համար, որպէս զի վրնչացող ձիի նման ոռնուելով աւելի լայնանան, սիրտդ աւելի բարախի ու հոգիդ նո՛ր հրապոյրների, նո՛ր խենդութեան ձգտի...

\* \* \*

Գնա՛նք լճափ: Ծառերն այնտեղ ծաղկել են: Գետինը կանաչել: Ծաղիկներն իրենց աչքերը փակած քուն են մտել:

Ե՛կ տեսնենք այնտեղ սիւղերի խաղը լճի հետ:

— Տեսե՞՛ր ես թիթեռների խաղը կրակի հետ...

Ափի եղէգներն ու կնիւններն երգ են յօրինում, որպէսզի յուզուած լճակը քնի, բայց նա քներգ չէ, նա քո երգերից է, որ երգեցիր հոգուս, որից հոգիս ո՛չ թէ հանգստի թմրութիւնն ստացաւ, այլ յուզմունքի տանջանքն, անգամ իր գնահատուածութեամբ:

Շո՛ւտ գնանք. լճափ գնանք: Ես կուզեմ լճին մէջ իմ տրտմութիւնս ապրիլ:



## II

## ՀՐԷՈՒՀԻՆ

Նրբին էիր, ինչպէս ձնծաղիկը դարնան առաջին օրերի, պայծառ էիր դու, առաւօտեան ծագող արշալոյսի նման ու նազանի՝ ինչպէս ցօղաթուրմ յափրուկներն իմ պարտէզիս :

Աչքերդ ներշնչման վառարաններ էին : Հասակդ համաչափ, դէմքիդ պրոնզագոյն թխութիւնը, մըթընչաղի խորհրդաւորութիւնն ունէր :

Չարածճի էիր ու դարմանալիօրէն պչրող :

Քսան տարեկան հազիւ կը լինէիր :

Հայեացքիդ մէջ կարելի էր կարդալ խօլ տենջանքի մի անուշ պօէմ, որի վերջաբանը դու արդէն զգում էիր, որ քո էութեամբ, քո արիւնով պիտի գրուէր :

Դրա՛ համար չէիր թողնում, որ ո՛չ ոք կարդալու մեծ տառապանքն ապրի :

\*

Քո հասակի մի կնոջ հետ էիր ման գալիս : Ու ես շա՛տ, շա՛տ թափառեցի յետեւիցդ անխօս :

Այնքան եմ յիշում , որ ամիսներ էին անցել այս-  
պէս ու մենք գրեթէ ծանօթներ էինք :

Այն օրը միայն մինա՛կ էիր . հանդիպեցինք ամեն  
օրուայ տեղը : Դու ժպտացիր ու սկսեցիր խօսիլ  
հետս :

\* \* \*

Շատ տարիներ են անցել այն երազ օրից : Դրա-  
մապանակս քրքրած ատենս , ամենայետին ծալքի մի-  
ջից , մի փունջ հիւսուած մազ դուրս եկաւ : Քոնն էր .  
յիշեցի , որ ասացիր .

— Առ ա՛յս , յիշի՛ր այս օրն ու այս կիներ , որ եր-  
բէք չ՛վարանեցաւ սիրած տղին իւր ամենաթանգ բա-  
նը տալու : Մենք իրար հետ այլեւս չենք կարող լի-  
նել , ես ամուսնացած կիւն եմ , դնա՛ :



III

ԳՆԱՆՔ ԼԵՅԼԱ

Գնանք Լէյլա, հովին ու զովին հետ մեր սարե-  
րում դեռ նոր ծաղկող գարնան անուշ ճիչը լսելու:

\*

Երփներանգ մարգին մէջ, ինչպէս փայլում են  
նարգիսներն, յափրուկն ու մանիշակը անմեղունակ:

Զարնենք մեր վրանն այստեղ:

Կեանքն արբեցման բաժակ ունի, ծաղիկները  
խորհուրդ, խինդի փրփրացում: Խփե՛նք վրաննիս:

\*

Ու դուն նստար սպիտակ շուշանների մէջ: Վեր-  
ջալոյսի արիւն-պաստառը սեւցաւ ու լուսնկան եկաւ  
մեր վրայ, իւր անըջասէր դարպասանքն սկսելու գա-  
րունին ու անհունին հետ:

\* \* \*

Մօտակայ գետակն, աղատուել է իւր բերանը  
փակող ձեռքից :

Նա պոռթկումների ամբոխային խելայեղումն ու  
թափն ունի իւր պղտոր կրծքում :

Նա բեղմնաւորման հունդ ու հաշիշ արբեցումն  
է կրում իւր մէջ :

Նա ձմեռ-հնի, իւր դարուն-նորն է շեփորում :

Նրա մէջ սարսա'փի կայ, պայքա'ր, եղե'ռն, բայց  
եւ կեանք, նո'ր կեանք :

\* \* \*

Ե'կ անուշ աղջիկ. թովչանքի սարսուռ ունին  
չրթներդ ու աչքերդ անէացման խելայեղում . . .



IV

ՄՆԱՐԻՍ ՄՕՏ ԿԵՐՈՆ ՄԻ՛ ՎԱՌԵՐ

Մնարիս մօտ կերոն մի՛ վառեր :

Թեւերդ բաց , կուրծքդ հոլանի , սպիտակ ման-  
թոդ հագիր :

Ոտքերդ բոսլի՛կ նստիր դիմացի աթոռին :

\* \* \*

Պատի բուխարին բա՛ց արա :

Արդէ՞ն :

Լա՛ւ . . .

Ջա՛ն , նստիր նորից :

\* \* \*

Ցուքերն ընկան ճակտիդ :

Դու թեւերդ իրար անցրիր կրծքիդ վրայ ու նը-  
րանց օղակման տակ , ծծերիդ արձանացումով լանջդ  
ուռեց :

Դեղձան մազերդ կարմիր հազան :  
Կապոյտ սլոզդ սեւցաւ :  
Ինչքա՛ն գեղեցիկ ես , ինչքա՛ն լաւն է այսպէս . . .  
Նկատուամ է թարթիչներիդ մեղմ շարժումը , որ  
հոգուդ ալեկոծումն է բնորոշում :  
Դու յուզուած ես . . .  
Փոթորիկ կայ ներսդ : Ե՛կ մօտս :  
Մենք միասին ապրինք փոթորիկն հոգուդ :



V

ԳԵՏԱՓԻՆ

Ես այնտեղ եմ պարտէզն ունիմ : Ե՛կ . շէկ աղջիկ  
եկ գետափն , երբ ծարաւես :

Ուռիներն ու թխկիները քեզ շուք կ'անեն , յոգ-  
նութիւնդ ու լքումդ կը թողնես՝ մէկը ջրի մէջ , մէկն  
հոգուս :

Ե՛կ . ե՛կ գետափ , երբ ջրերն հանդարտին , երբ  
դեղին վերջալոյսը հարեւան անտառի կաղնուտի մէջ  
բանտարկուած մեռնի :

Եկ գետափ : Արշալոյսին , տապ արեւին եկ գե-  
տափ : Մերկ ու մենակ ե՛կ . լոգանք կ'անենք մենք մե-  
նակ :

\* \* \*

Մի՛ տխրիր , մեզ խածնող արեւին , արեւին մենք  
յաղթեցինք . . .



VI

\* \* \*

Հեթանոս աղջիկ, սիրեցի մերկուլթիւնդ առողջ,  
որ երեկ ինձ տուիր:

Սենեկիդ օդն հաշիշով էր լեցուն, իսկ անկողինդ  
մշկահոտով:

Դուն հոգիովդ հոգուս խրախճանք սարքեցիր:

Դուն մարմնիս ու հոգուս վայելքի վեհ արբեցու-  
մը տուիր:

Դուն տենչերիս տաք ծարաւը, հոգուցդ բղխող  
տաքութեամբ յագեցուցիր:

Օրհնեա՛ւ լինիս աղջիկ... հեթանո՛ս աղջիկ...  
գեղեցկին ու հաճոյքին, ուժին ու կեանքին կեանք  
տուող սիրուն Նանէ՛... .

\* \* \*

Ե՛կ. այս անգամ դո՛ւն եկ ինձ մօտ:

Մթնշաղին եկ ինձ մօտ:


Ժամանակը մեր ամօթի քօղը կը լինի:

Երկնքի կապոյտը մեր ծածկոցն ու հիւղակիս  
առաջ վառուող քրքումներն էլ անկողինը մեր:

Արշալոյսին տակ, որ այն օրն անհամար ոչնչու-  
թիւններ են գոյութեան կոչուելու,

Արշալոյսին բեղմնաւորենք:

VII



Ես պառկած էի անկողնիս մէջ, որ դու եկար :  
Սպասումի ձանձրոյթն ինձ թմրեցրել էր :  
Նօսր ու բարակ մի ճերմակ քօղ մերկութեանդ  
հմայք էր տալիս :


Փոքր ոտքերիդ ձայնը սենեկիս ու հոգուս մե-  
նութեան, վայելքի ըմբռչիւման աւետիքը տուին :

Արդէն մայրութեան տենչացող կողերուդ ելե-  
ւէջին տակ լեցուն ծծերդ մարգարտէ կանթեղներ ե-  
ղան հոգուս մինչ այդ խաւարին մէջ :

Սեղանիս լամբն հանգցրիր :

Սեղմեցիր պատի կոճակն ու թոյլ կարմիր լոյսի  
ստուերով մերկութիւնդ օծուեց . . .

Դու քեզմով սքանչացած, ինձ սքանչացուցիր . . .



Դնդերների պրկումներ ունեցայ, ընդվզումների  
խելայեղութիւններ :

Թեւերիդ օղակման ու զստերիդ շիւման հաճոյքի

նախերգանքը երգելուց յետոյ, յառաջացանք դէպ  
անկողնի ճերմակութիւնը, արբեցումի ու մոռացման  
մեծ երգն ողբալու:

Մի՛ լար, անուշ աղջիկ...

Մենք մեր կեանքին նոր իմաստ տուինք:

Չէ՞ որ դու իմ կինն ես:



VIII

ՈՒ ԴՈՒ ԻՆՁ ՄՕՏ ԱՅԼ ԵՒՍ ԶԵԿԱՐ

Ծառզարդարի ուռու պէս թարմ էիր ու գեղեցիկ  
մեր երկրի արշալոյսների նման :

Ամբողջովին սեւ շորերդ հմայքի մի զգլխիչ  
բուրմունք էին ցանում գեղեցիկ անձիչ ու հասակիդ  
պերճութեան վրայ :

Արուններն արբում են , արուները վառում են  
այդ բուրումից :

Առաջին օրուանից իսկ վարուելակերպիդ մէջ  
բոլոր հայրենակցուհիներիդ անբռնազբօս պարզու-  
թիւնը դրիր :

Կաթի նման ճերմակ թաթերդ , իրենց դուրեկան  
տաքութեամբ թողեցիր , որ դեռ եւս մնան ձեռքիս  
մէջ :

Դէմքիդ վրայ դամուած , զուսպ , քիչ թախծոտ ,  
անուշ ժպիտդ , աչքերիդ գիշեր երազկոտութեան  
հետ , յոյսի , յոյզի աստղեր ծնան հոգուս :

Անհո՛ւն էր այդ կամարը , անո՛ւշ էր այդ կա-  
մարը :

Ու ես նայեցի . . . նայեցի . . .

Ձմեռուայ ցուրտին դէմ արհամարհանքի ճոխու-  
թիւնն հագած սենեակս , քո այցով , արդէն քրտնած ,  
ցնծում էր իր պերճանքի մէջ :

Կատուս թախտին վրայ վռտոցը դադրեցրել էր  
ու քո գրկիդ տաքութեան գուրգուրանքին էր դիմել :

Դու անուշ շոյում էիր նրան :

Ձեռքիդ փափկութեան շոյանքի մէջ նա գլխի ել-  
եւէջ էր ունենում :

Կարծես ծովի յորձանքին յանձնուած նաւակ լի-  
նէր , բաղդատար , ալեկապ . . .

Իմացայ , որ անտառի ամենագեղեցիկ կաղնիի  
նման կայծակնահար , սիրուդ մէջ սգաւոր , այրի , մի  
մանկամարդ կին ես :


Շատ անգամներ եղանք միասին : Դու ինձ՝ մի-  
նակ խօսքիդ ու ներկայ լինելուդ վայելքը տուիր . . .

Ու մի օր , երբ ես ուզեցի սգազգեստիդ տեղ ,  
սրտիս անմեղութիւնից ծաղկած սիրոյս սպիտակ  
պատմութեանով պատել էութիւնդ , դու լաց եղար ,  
լա՛ց եղար շա՛տ խոր . . .

— Ես թերեւս աւելի շուտ , աւելի շուտ քեզ այդ  
յայտնէի . . . Եւ ի՞նչ էր ցոյց տալիս այդ այցերը . . .  
Բայց տեսայ , որ ես դեռեւս , նրան չեմ մոռացել , չեմ  
մոռացել . . . Քեզ սիրելուս համար ես քեզ հետ չեմ  
լինի ասացիր . . .

Ու այն օրից դու ինձ մօտ այլեւս չեկար :

## IX



Ու խօլ պարի մէջ պարտասած, դահլիճից հե-  
ռու, փոքրիկ առանձնասենեակիս պարզութեան մէջ,  
մարմինդ ամբողջական թուլութեամբ թեւերիս  
յանձնեցիր :

\*

Այտերիդ դեղձան թաւիշից, երեք մեծ կաթիլ-  
ներ՝ օծանելիքի բոյրով շաղուած, աղօսել էին  
կուրծքիդ մերկութիւնն անուշ :

Կայծակնացայտ, երկնագոյն աչքերիդ մէջ, ես  
տեսայ թուխս նստած դաւը, փոթորկի վերահասու-  
մով, անձիդ դէմ, քեզ դէմ . . .

Կօշիկներդ հանեցի . . .

Ճերմակ մետաքսէ գուլպաներիդ նրբութեան մէջ  
գծուած ալապաստր բուրբերդ, հեզնում էին դարե-  
րի ու հանճարների կերտած գեղեցկութիւններն ան-  
մահ . . .

\*

Փափկութիւնդ ծնկերիս յենած, կիսամբրափի

մեղմ թուլութեամբ, մոմի նման մատներդ մազերիս  
հետ խաղալու քնքոյշ ու տարօրինակօրէն քեզ հա-  
մար պահանջ-հաճոյքը փնտռեցին :

Յօրանջի սարսուռով թեւերիդ մերկութիւնը մի  
րոպէ պրկուեց իր վրայ ու բերնիդ փոքրութեան մի-  
ջից, աչքերիդ փակման տակ, երեւաց ատամներիդ  
սատափաշարքը :

Թանգ բեռիս տակ հպարտ, ցանկութիւնս կատ-  
ղած ձիու խրխինջներ ունեցաւ, անո՛ւշ աղջիկ . . .

\* \* \*

Ու ես երբ քեզ ճամբայ պիտի դնէի, աչքերիդ  
մէջ կարդացի յաղթանակի ծիծաղդ անգութ . . .

— Չէ ո՞ր քրոջդ սէրն էիր գողցել . . .



X

ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ ՏՕՆ Է...

Հանրապետութեան Բ. Տարեդարձին.

Այս իրիկունն տօն է...

Լուսազարդ է քաղաքը...

Սիրուն է քաղաքը...

Մայթերն ու փողոցներն ամբոխի երգի ու յորձանքի տակ, գարեջրի բաժակի նման յորդել են...

Ամեն տեղ ծածանող եռագոյններն, հովերին ու ծագերին են ուղարկում իրենց հպարտութիւնն ու խրախճանքի արբեցումն ազատ:

\* \* \*

Արուեստիդ տաճարում, ժողովուրդը պետութեան հետ, իր յաղթանակի, իր ցեղի հպարտանքի երգն է երգում քո բերնով: Հէ՛յ, հէ՛յ, ի՛նչ անուշ ես երգում, անուշ աղջիկ...

Ի՛նչքան հզօր է երգիդ հմայքը...

\* \* \*

Չայնիդ հետ բարձրացող կրծքիդ խրոխտութիւնը հայրենի յոյսիդ մաքրութիւնն ունի: Թւերիդ մերկութիւնը, ցեղիդ կտրիճների սուրերի փայլն ու-

նին , որ յաղթանակն ու հաճոյքը կալանեցին . . .

Աչքերդ մեր երազի խորաններն էին այն , որ թի-  
թեռանման զոհաբերումով , ցեղիս ողնաշարն հիպ-  
նոզեցին :

Մեկնումիդ պահին , վերջին շարժման փոթոր-  
կումով , ուսիդ ձգած կարմիր ցփսիդ մեզ յիշեցրեց  
ու ազդարարեց նորից արիւնայոյզ դրօշն ահեղ ,  
դարուս պոռնիկ իշխողների ճակտին , վրէժի ցասու-  
մով :

\*

Փա՛ռք մեր հայրենի դարերին , որ հռոմ գան-  
գեր , երգիդ պէս հզօր բուրումով մեր պապերի ուն-  
գերն այրեցին . . .

\* \* \*

Եւ երբ դուրս եկանք , վերարկուս քեզ փաթ-  
թուելու մեծ հաճոյքն ունեցաւ ու իր սեւ աչքերը  
փակած , կրծքիդ վրայ , քնեց :

Դէպի տանս մենութեան առաջացող կառքին օ-  
րօրման ու ծաղկեփունջերի բուրման մէջ , յոգնած  
մարմինդ , կիսաթեք դրութեամբ , երջանկութեանդ  
հետ , հոգուս ու գրկիս գուրգուրանքին տուիր . . .

\* \* \*

Եւ ես , իմ մէջս էլ ցեղս , այն օրն յաղթանակի  
երգը սեղմած սրտիս , հաճոյքի կարմիր գինին ծաղ-  
կած դարունիդ քղանցքին քամեցի . . .

. . . Բայց կասկածը սիրտս էր մաշում . . .

# XI

## ՍԵՒԱՆՈՒՄ

Փ. ԹԷՐԻԿՄԷՂԻՆ .

Բանաստեղծի հոգու նման պարզ էիր ու անկեղծ . . .

Մեծ-քաղաքի դահլիճներում ծախսող անհրաժեշտ վարուելակերպերը, քո մէջ հայրենի գիւղի սրտաբաց համեստութիւնն էին հագած :

Գրաւչութիւնդ արուեստի հղօրութիւնն ունէր եւ հետդ խօսեցնելու ուժդ հեթանոս հմայքների արժէքը :

Հայ գեղեցկութիւնդ պճնուած էր հիւսիսի նըրբութեամբ . . .

\* \* \*

Արեւածագին, նկարիչ բարեկամիս հետ, կղզու բարձրութեան վրայից տեսանք, որ հանդիպակաց ափից մենաստանի նաւակը ճամբայ ընկաւ . . .

Ձեր նաւի առագաստը, կարապի ճերմակ թելի նման, ծովափին, կոտրուեց :

Ամենից առաջ դու, Յամաքաբերդցի ծեր, խոժո-  
ռադէմ, նաւաւարի հայրական հոգածութեամբ ար-  
տասանած խռպոտ զգուշացման տակ, սօթտած մա-  
զոտ, ջլապինդ թելը բռնելով թռչնի թեթեւութեամբ  
ցատկեցիր աւազի մէջ:

Բարեւեցիր, հետդ էլ ընկեր հովեկներդ եւ մենք  
առաջնորդեցինք ձեզ...

\* \* \*

Շատ օրեր եղանք միասին...

Տեսանք ծիրան արփուն հետ, արիւն վերջա-  
լոյսներ, լուրթ կապոյտին մէջ խեղդուած:

Անցանք միասին ձեռք ձեռքի «Հին-աստուած-  
ներ»ի «դժոխքի ճամբա»ներից...

Ու կղզու մենութեան մէջ, մտերմութեամբդ  
բացուած հոգուս, հեթանոս գեղեցկութեամբ սիր-  
տըդ լեցուցի...

\* \* \*

Լուռ գիշեր էր...

Մենաստանն իր բարեպաշտութեան հետ, զան-  
գակների ղօղանջի աղօթքի ու խոլնկի բոյրերի տակ  
քուն մտաւ...

Կղզու հեռաւոր քարափներում, զանազան զոյ-  
գեր լուսնի խաղերն են դիտում ծովակի սրտին...

\*

Գլուխդ ծնկերիս, մենակ ենք հարաւային ափի մի քերծի գլխին...

— Անո՛ւշ աղջիկ, այս տեղերից հայ արքաներ անցան սիրոյ ու հայրենիքի վշտի հետ մենակ...

\*

Հայրենի դարե՛ր, պայքարի դարե՛ր, որ Աշոտների յաղթ բազուկով, ծովամարտեր մեր սէրն ու միտքը փրկեցին...

\*

Ամպերի ստուերին տակ հեւացող ծովակի գորշ կապոյտը, լուսնի ցոլքերի տակ, մթուժեան մէջ քրնացող գեղեցկուհու կրծքի ճերմակութեամբ փայլեց...

Յամաքարերդի կալերում գիշերող գիւղի տղաների խարոյկը մատնիչի աչքերով, կարծես ճիշդ մեզ էր նայում...

Ծովակի վրայ կախւող լեռնաշղթայի փէշերը կտրող խճուղուց, բեռնատար կառքերի շարքեր են անցնում...

\*

Հրաշալի է Սեւանը...

Այս ծովակն ու երկինքն ասացիր. եւ սրտիդ յուռթի կարօտի խենդութեամբ ինձ փարուեցիր...

Ու ես հարբած, գիշերօթիկի ամաչկոտութեանս հետ, անմեղութեան բաժակը ծնկներիդ կտրեցի...

## XII

### ԳԻՒՂԻ ՀԱՐՍԸ

Երկար կռիւներէից յետոյ, մեր զօրամասի հան-  
գըստի համար ձեր գիւղն ընտրեցինք :

Լեռնոտ մի աշխարհ էր :

Դէպի ձեր գիւղն առաջացող ճանապարհը մի  
լեռնային կաճան է, որ անցնում է ճիշդ ձորամիով :

Անդնդախոր ձորից մի փոքրիկ առուակ է հո-  
սում :

Ոտքի մի փոքր սայթաքում մարդ կը թաւալի  
ցած :

Զգուշութեան համար ցած ենք իջնում ձիերից  
ու սանձերից քաշելով կամաց-կամաց անցնում այդ  
դժոխային ճանապարհը :

Զորը բուսականութեան ո՛չ մի հետք չի կրում .  
լերկ, սեւ ժայռի կտորներ անյիշելի ժամանակնե-  
րից քարացել մնացել են :

Մի կերպ անցանք ձորն, ինչպէս նաեւ կամուր-  
ջը, որ ձորի մէջ տեղում, երկու մեծ, հանդիպա-  
կաց ժայռերի վրայ դրած հաստ տախտակներից  
չինուած մի խարխուլ անցք է :

Այստեղից սկսւում են արդէն գիւղի քարէ պատերով եզերուած այգիները...

Գիւղը լեզենդական հսկայի նման կրթնել է ձորին ու ոտքերն էլ կախել գետակի զովութեան մէջ:

Մեր հարիւրեակն այդտեղ էր մնալու:

Գիւղական նախիրը, մեր անցած կածանով վար է իջնում:

Օրը համեմատաբար շուտ տարածամեց այս ձորամիջում:

Մեր մօտը, մի մեծ չինարու տակ, սրբատաշ քարերից շինուած մի ջրառատ սիրուն աղբիւր կայ...

Աղբիւրից քիչ վերեւ, մի այգու մէջ, ձիերը կապեցինք երկար կապերով, որտեղ վնասուելու ո'չինչ կար ու օդն ամպոտ լինելու պատճառով քիչ հեռու էլ, մի առույտի քաղած արտում, մեր վրանները խրփեցինք:

Մեր աջ կողմը՝ երկաթ թելերով եզերուած, մի փոքրիկ բանջարանոցի կողքին՝ մի ջրաղաց կայ:

\* \* \*

Ամպոտ, խոր, մուխ գիշեր է:

Չորս կողմի համատարած լռութեան մէջ լսւում է նեղ ձորակից հոսող առուակի մեղմ խոխոջիւնն ու ջրաղացի քնաբեր, անուշ չիչիկոցը:

Ես ինձ հետ եմ քարափին վրայ...

Ջրաղացականի կանթեղի աղօտ լոյսի արծաթագոյն վարսերը, նեղ պատուհանով ցոլացել են ջրի

մէջ եւ մեղմ զեփիւռի հետ խաղ են անում : Բաւական  
երկար նստում եմ , բայց բնութեան պահանջը յաղ-  
թում է սիրուն տեսարանի հմայքին եւ ես վերադառ-  
նում եմ վրան :

\* \* \*

Արդէն երկու օր է , որ այստեղ ենք :  
Բլուրի մօտով , կանացի մի ստուեր անցաւ , եզ-  
նիկի արագութեամբ :

Չ'զիտեմ ինչի ուղեցի հետապնդել . . .  
Գետակի ափին ցցուած մի ժայռի վերեւ հանդի-  
պեցինք :

Մի ընկալ մոլար , կանգ առար :  
— Ի՞նչ ես փնտռում քոյրիկ , ասացի :  
Վա՛յ ախպէր , վախեցայ , դու Հայ ես եղել ,  
Ռուս կարծեցի . . . Մեր կովը տուն չի եկել , եկել եմ  
փնտռելու . . . ու մօտեցար խօսելու գիւղիդ սրտա-  
բացութեամբ :

Դու էլ զինուորի կին էիր . . .  
Վերջալոյսը մոմէ ճրագի նման մէկէն հանգաւ  
ձեր սեպ լեռների մէջ :

Միամտօրէն հարցեր էիր տալիս , թէ՞ արդեօք  
ճանաչում եմ քո ամուսնուն :

Ուղեցիր գնալ :  
— Կը գնաս , ի՞նչ ես շտապում ասացի :  
— Չէ՛ ախպէր , կեսուրս ինձ կը փնտռէ , ասա-  
ցիր , բայց նոր հարցերով մնացիր . . .

\* \* \*

Գեղեցկուժիւնդ հայրենի տարազիդ մէջ թագ-  
ցըրած քսան-տարեկան մի մարալ հարս էիր...

Բերդեր գրաւելն ի՞նչ բան էր զինուորի համար  
քո համեմատուժեամբ, բայց զինուորի կին էիր,  
զինուորի հալից հասկացող...

\* \* \*

Թեւերդ կրքիդ ուժով թեւերս գրկեցին ու գեղ-  
ջուկ համբոյրդ այրուեց շրթներիս, վայրի բռնկու-  
մով...

\* \* \*

Յաղթանակով սպիացած ճակատս, գեղջուկ  
պարզուժիւնիցդ ծագող միամիտ սիրովդ պսակեցի  
ես այն գիշեր...

... Եւ այն օրից շատ անգամներ եկար, կոր-  
սուած կովիդ հետ, կորսուած սէրդ գտնելու:



### XIII.

#### Է՛Ն ԼԵՅԼԱ

Է՛Ն ԼԵՅԼա, ե՞րբ է կեանքն իր բնական ճանապարհով ընթացել...

\* \*

Դու՛ն իմ հարեւանս էիր :

Մանկապարտէզ միասին գնացինք :

Մէկ նստարանի վրայ միասին նստանք :

Մեր խաղերի, մեր կռիւների ժամանակ մշտական միասին եղանք...

Դու թիթեռնիկի պէս գիժ էիր ու չարածճի հետս խաղցող ուլի նման :

\* \*

Տարիներ անցան, մենք մեծցանք...

Այլեւս առաջուայ պէս ազատ կերպով չ'կարողացանք իրար հետ լինել...

Դու գրքեր առնելու կամ քրօջս տեսնելու դիտաւորումով, դալիս էիր երբեմն մեր պարտէզն ու երկար մնում մօտս :

Ես՝ պարտիզպանն եմ պարտէզիս, կարմիր վարդեր էի քաղում կրծքիդ անմեղուլթեան...

Սիրուն դէմքիդ շարմաղ ճերմակութեան վրայ  
փայլում էր անուշ ժպիտդ :

Կարապի վիզդ թեքում էիր ուսիդ ու աչքերդ ,  
դիչերուայ մէջ , հէքեաթներ էին պատմում հոգուս :

Դու հասած աղջիկ , վերահաս մայրութեանդ  
վանդակին մէջ բռնուած , բազէի բողոքն ունէիր . . .

\* \*

Բայց մի օր եկար ինձ մօտ , մանուկ օրերիդ խը-  
րո'խտ ապրումներով :

Աշնանային մի օր էր դա : Մեր հասած նուռի ծա-  
ռին տակ , կախուող նուռերի նման կարմիր շրթնե-  
րիցդ ծեփուող , մեղքի պէս թովիչ համբոյրդ էու-  
թիւնս հրդեհեց . . .

\* \*

Օրեր վերջ , իմ պարտէզիս բարտու տերեւների  
նման , ես իմ կեանքը քամուն յանձնեցի . . .

Հոգիս համբոյրիդ էր շղթայուած . . .

\* \*

Կեանքն իր բոլոր արարներով ապրեցի : Շատ  
համբոյրներ առի , շատ համբոյրներ տուին , բայց  
ո'չ մէկն արժեց մեր նռան տակի համբոյրին :

Եւ հիասթափուած կեանքից , նրա բաժակն ես  
իմ ատամներիս մէջ էի փշրել , ալեխառն մազերս ,  
մօրս փակուող աչքերին ցոյց տալ եկայ . . .

\* \*

Դեռ կանդուն էր մեր նռնենին . . . Իր աշնան բե-

ուին տակ, մօրս նման մէջքը կքած, աչքերը դետնից  
չէր վերցնում...

Ես քեզ նորից յիշեցի...

\* \*

Մի «հրաւէր»ի ժամանակ, սեղանի ճոխութեան  
կողքին նստողների մէջ, տեսայ նաեւ քեզ, վշտիդ  
լրջութեամբ, սուգիդ սեւերով...

Բարեկամս բոլորիդ ծանօթացրեց ինձ այս ձե-  
տով. «Սա՛, մեր «անառակ որդին» է», որ վերջապէս  
եկաւ...

Մտերիմ էր շրջանը...

Եղնիկի աչքերով ինձ դիտեցիր ու երբ բոլորն  
առանձնացան թղթախաղի սեղաններին, մենք եր-  
կուսով, դահլիճի ու մեր հոգու վաղուց լքուած նը-  
ւազարանին դիմեցինք...

Սօսեցիր ու լացիր...

Երանի՛ քե՛զ, որ կարողացար լաց լինել...

Ես թափառական աշուղ, դուն վշտոտ այրի...  
հոգու հաշիւներ տեսանք...

— Ո՞վ էր նա, Լէյլա, որ եկաւ իր ոսկիով, սէրս  
հօրդ ձեռքից բացակայութեանս գողացաւ, ո՞վ էր  
նա, որ սերհատ տուփանքն եկաւ կուսութեանդ դա-  
րունին ցանել...

— Ո՞վ էր նա, Լէյլա, որ հարսանիքիդ ճերմա-  
կից անմիջապէս յետ, սուգի սեւերդ հագցրեց...

Մի՛ լար Լէյլա, կեանքն ե՞րբ է իր բնական ճամ-  
բով ընթացել...

## XIV

### ՄԱՐԻՔԱՆ

Ես ճամբորդ հեռու արեւելքից, քո հայրենի քաղաքում, ո՛վ Մարիքա, յոգնութիւնս, վերջալոյսների մէջ եփուող հայրենի ջրերիդ ու ծովափի երգերի տակ փրփրող գինիի կարմրութեան յանձնեցի . . .

Դու ինձ հանդիպեցիր «Կաֆէ-Կոնցէրտ» Փարիզիանայում : Երբ ներս մտայ, ընկերուհիներդ, կուտին վազող հաւերի նման իմ վրայ վազեցին . . .

Դուն ամենից յետ էիր կանգնել, բայց ես քեզ տեսայ . . . մինչ այն կողմ, փոքր բեմի բարձրութեան վրայ, մի ումէն ջլեբաց պոռնիկ, թոքերը պատուելու չափ մի բան էր «երգում» :

Չ'գիտեմ ինչի, ինձ թուաց, թէ դու տատրակի մաքրութեամբ մի վիրաւոր տատրակ ես այդ ագռաւների լկտիութեան մէջ . . .

Բոլորն հեռացան . . . դո՛ւ մնացիր ինձ մօտ . . .

\* \* \*

Սիկարի ծուխ, քրտինքի ու ձկան հոտ, ջլապինդ

սօթտած թեւեր, ձեր մերկ սրունքների հետ, պատի  
հայլիների մէջ, անյայտ ու անորոշ հեզնանքներ ու  
ծիծաղներ էին թքնում դարուս տիրող խղճին վը-  
րայ...

\* \*

«Մետաքսա»ն մեր սեղանին, իսկ դու իմ ծըն-  
կանս, կատղած վագրի պէս փրփրեցաք...

Ես՝ յոյն գեղեցկութիւնը, յոյն մտքի հետ գըր-  
քում էի ճանաչել, այսօր նա անկողնումս գտայ...

Դու գեղեցիկ էիր հայրենի դարերիդ ապրումնե-  
րի նման ու մերկ, ձեր աստուածների սպիտակու-  
թեամբ:

\*

— Փա՛ռք ձեզի, յոյն աղջիկներ, որ հեթանոս  
դարերում, ձեր սէրն անկեղծ, միայն ուժին ու գե-  
ղեցկին բաշխեցիք...

\* \*

Ո՛հ տարփանքն այն, տրփանքն այն, հե՛շտին,  
խոնա՛ւ, լո՛յծ, յուռթի, որ շրթներիցդ էր կաթում,  
ինչպէս այրի կնոջ վառած կանթեղն անմար, որ վա-  
ռեցիր այն գիշեր...

Հեթանոս յոյնի նման, ձիւնաթուրմ գիրկդ ինձ  
բարձ արի, ո՛վ Մարիքա, եւ քո հայրենի քաղաքում,  
մեռած աստուածների տաճարին, ես արեւելքցի մի  
ճամբորդ, ծախուած սիրուդ հետ խաչուած գեղեց-  
թիւնդ, սրտիս մենութեան մէջ ողբացի...

## Յ Ա Ն Կ

Էջ

### ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ

I.	Հանդիպում	7
II.	Ծանօթութիւն	7
III.	Մտերմութիւն	8
IV.	Ճանապարհին	9
V.	Առաջին Գիշեր	10
VI.	Երկրորդ Գիշեր	12
VII.	Երրորդ Գիշեր	14
VIII.	Չորրորդ Գիշեր	16
IX.	Հինգերորդ Գիշեր	19
X.	Վեցերորդ Գիշեր	23
XI.	Եօթներորդ Գիշեր	27
XII.	Ութերորդ Գիշեր	31
XIII.	Իններորդ Գիշեր	34
XIV.	Տասներորդ Գիշեր	38
XV.	Տասնըմէկերորդ Գիշեր	41
XVI.	Տասներկուերորդ Գիշեր	42
XVII.	Տասներեֆերորդ Գիշեր	46
XVIII.	Զգուշացում	53


XIX.	Բաժանում	56
XX.	Առաջին Օրը	57
XXI.	Երկրորդ Օրը	59
XXII.	Երրորդ Օրը	62
XXIII.	Երկու Ամիս Յետոյ	63
XXIV.	Դպրոցում	65
XXV.	Նոր Ուղի	67
XXVI.	Մարտի Դաշտում	69
XXVII.	Վերջին Հանդիպում	71
XXVIII.	Քո վերջին Նամակը	73

### ՀԵԹԱՆՈՍ ԱՂՋԻԿ

I.	ԼնափԳնանք	79
II.	Հրեուհին	81
III.	Գնանք Լէյլա	83
IV.	Սնարիս Մօտ Կերոն Մի՛ վառեր	85
V.	Գետափին	87
VI.	***	88
VII.	***	89
VIII.	Ու Դու ինձ Մօտ Այլեւս Չեկար	91
IX.	***	93
X.	Այս Իրիկուն Տօն է	95
XI.	Սեւանում	97
XII.	Գիւղի Հարսը	100
XIII.	է՛հ Լէյլա...	104
XIV.	Մարիֆան...	107



1/2 43/0  
 [Handwritten signature]





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0053553

[ 404 ]

A <sup>T</sup>  
14411

THE UTA SOLAR